

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Հետազոտության հաշվետվություն**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հապավումների ցանկ .....	2
Հետազոտության նախապատմությունը .....	3
Հետազոտության նպատակը .....	4
Հետազոտության մեթոդները և ընտրանքը .....	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ .....	6
Համավարակի պատճառով ՀՈւԱ առջև ծառայած խնդիրները .....	11
Համավարակի ընթացքում ՀՈւԱ պետական աջակցությունը .....	12
Համավարակի ընթացքում հաստատություններում ապրող ՀՈւԱ պաշտպանությունը .....	17
ՀԿ-ների կողմից ՀՈւԱ տրամադրված աջակցությունը .....	17
ՀՈւԱ-ների համար COVID-19-ի բուժման հասանելիությունը .....	19
Պետության կողմից պատվիրակված ծառայությունները .....	20
Համավարակի ընթացքում տեղեկատվության հասանելիությունը .....	22
Խոսքի ազատությունը համավարակի ընթացքում .....	26
Համավարակի ընթացքում միավորումների ազատությունը .....	28
Համավարակի ընթացքում քաղաքացիական մասնակցության խնդիրները .....	29
Համավարակի ընթացքում խտրականության բացակայության և ներառում .....	30
ՀՈԻԵ պաշտպանությունը համավարակի ընթացքում .....	32
Մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը համավարակի ընթացքում .....	33
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ .....	36
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	39

## Հապավումների ցանկ

ԱՀ	ՀՈւԱ -ների հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀԴ	Հայկական դրամ
ՀԿ	Հասարակության կազմակերպություն
ՀԿԿ	Հատուկ կրթական կարիքներ
ՀՈԻԱ	Հաշմանդամություն ունեցող անձ
ՀՈԻԱԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
ՀՈԻԵ	Հաշմանդամություն ունեցող երեխա
ՄԱԿ	Միացյալ Ազգերի Կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀ	Քաղաքացիական հասարակություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

## Հետազոտության նախապատմությունը

ՀՈԱ-նք հայկական հասարակության մեջ առավել մեկուսացած խմբերից են: ԱՀԿ-ն և ՄԱԿ տարբեր գործակալությունների հաղորդմամբ ՀՈԻԱ-նք ամբողջ աշխարհում էապես տուժում են COVID-19-ից<sup>1</sup>: COVID-19-ի բնկումից հետո Հայաստանում 2020 թվականի մարտ ամսին հայտարարվեց արտակարգ դրություն, որը երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և առօրյա կյանքի բոլոր մակարդակներում հանգեցրեց հսկայական փոփոխությունների:

Առողջապահական հաստատությունները գերձանրաբեռնված էին վարակված մարդկանցով, երկրի տնտեսությունը էապես տուժեց անապասելի մարտահրավերներից, շատ մարդիկ մնացին տանը առանց աշխատանքի և եկամտի հնարավորության, ներդրվեցին տեղաշարժման սահմանափակումներ, և կառավարությունը խիստ վերահսկողություն սահմանեց իրավիճակի մասին տարածվող տեղեկատվության նկատմամբ:

Խոցելի խմբերը, ներառյալ ՀՈԻԱ, այս փոփոխություններից և սահմանափակումներից լրջորեն տուժեցին և դեռ շարունակում են տուժել: ՔՀԿ-ների՝ ՀՈԻԱ անունից խոսելու կարողությունը խաթարվեց՝ պայմանավորված ինչպես սահմանափակումներով, այնպես էլ քովիդյան և հետ-քովիդյան իրողություններով:

COVID-19 ճգնաժամի հետևանքով Հայաստանում հաշմանդամության իրավունքներով զբաղվող ՔՀ դերակատարները բախվեցին հանրային տարածքի կրճատման խնդրին, ինչպես նաև արձանագրեցին մարդու իրավունքների խախտումներ ու սահմանափակումներ:

COVID-19 համաշխարհային ճգնաժամը խորացրեց ՀՈԱ նկատմամբ խտրական վերաբերմունքը և անհավասարությունը:

Իրավիճակը Հայաստանում ավելի սպառնալի դարձավ 2020 թվականի սեպտեմբերին Արցախյան պատերազմի բռնկման պատճառով: Այն հանգեցրեց մարդկային և տարածքային հսկայական կորուստների, հումանիտար և սոցիալական ճգնաժամի: Պատերազմի ընթացքում հազարավոր երիտասարդներ վիրավորվեցին և դարձան հաշմանդամ:

<sup>1</sup> [https://www.who.int/docs/default-source/inaugural-who-partners-forum/english-covid-19-disability-briefing.pdf?sfvrsn=8a1aa727\\_1&download=true](https://www.who.int/docs/default-source/inaugural-who-partners-forum/english-covid-19-disability-briefing.pdf?sfvrsn=8a1aa727_1&download=true) & [https://www.ohchr.org/Documents/Issues/Disability/COVID-19\\_and\\_The\\_Rights\\_of\\_Persons\\_with\\_Disabilities.pdf](https://www.ohchr.org/Documents/Issues/Disability/COVID-19_and_The_Rights_of_Persons_with_Disabilities.pdf)

## Հետազոտության նպատակը

«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ը նախաձեռնել է հետազոտություն՝ պարզելու, թե որքանով են սահմանափակվել ՀՈՒԱ իրավունքներով զբաղվող ՔՀԿ-ների հնարավորություններն ու գործունեության շրջանակները, որքանով են նրանք կարողացել պաշտպանել իրենց շահառուների իրավունքները համավարակի ընթացքում և ճգնաժամի ժամանակ:

Հետազոտության նպատակն է բացահայտել COVID-19 համավարակի հետևանքով առաջացած փոփոխությունների և արգելանքների արդյունքում ՔՀԿ-ների սահմանափակումները և ՀՈԱ-ների իրավունքների խախտումները, ինչպես նաև դրանց վերահսկմանն ուղղված պետական միջոցառումները:

Հետազոտության արդյունքները կնպաստեն, որ Հայաստանում բարձրանա ռիսկային և արտակարգ իրավիճակներին ներառական արձագանք տրամադրելու իրազեկվածության մակարդակը: Կարգաձևն ՔՀԿ կարողությունները հաշմանդամության և մարդու իրավունքների խախտումների հետ կապված հարցերը զեկուցելու և դրանց արձագանքելու հարցում:

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունները կնպաստեն հաշմանդամության իրավունքով ՔՀ հայաստանյան դերակատարների կարողությունների զարգացմանը, կամրապնդեն ՔՀԿ-ների կարողությունները՝ ուսումնասիրելու ՀՈԱ վրա COVID-19 սահմանափակումների ազդեցությունը, ՀՈՒԵ-ների և ՀՈԱ-ների իրավունքների խախտումները և կնպաստեն ճգնաժամային իրավիճակներում ՀՈԱ-ների իրավունքների պաշտպանությանը:

## Հետազոտության մեթոդները և ընտրանքը

**Կիսաձևայնացված հարցազրույցի մեթոդը** ընտրվել է որպես հետազոտական հարցերին պատասխանելու լավագույն մեթոդ: Հարցաթերթիկը ներառում էր ինչպես բաց, այնպես էլ փակ հարցեր, որոնք ապահովել են բավարար որակական տեղեկատվություն և լրացուցիչ քանակական տվյալներ:

Հարցվել են ՀՈԱ հետ աշխատող 9 հայաստանյան ՀԿ-ների (որոնցից 5-ը՝ ՀՈՒԱԿ) ներկայացուցիչներ՝ հաշվի առնելով համավարակի ընթացքում և հետքովիդյան շրջանում ՀՈՒԱ շահառուների իրավունքների խախտումների հետ առնչվելու և դրանց կանխման գործում իրենց փորձն ու հմտությունները:

9 ՔՀԿ-ներից 6-ը գտնվում են Երևան քաղաքում, մյուս 3-ը՝ Կոտայքի, Լոռիի և Արմավիրի մազերում:

9 հարցվածներից 3 արական սեռի ներկայացուցիչների են:

2021 թվականի հուլիս ամսվա ընթացքում հարցվել են հետևյալ ՀԿ-ների ներկայացուցիչները:

1. «Սկարպ» ՀՈՒԱԿ
2. «Էխո» ՀՈՒԱԿ
3. «Ունիսոն» ՀՈՒԱԿ
4. «Մենք Կարող ենք» ՀՈՒԱԿ
5. «Սպիտակ բազե» ՀՈՒԱԿ
6. «Սովորեցրու ինձ ավելին» ՀԿ
7. «Հավասար հնարավորություններ և ներառում» ՀԿ
8. «Հույսի Մեծամոր» ՀԿ
9. «Հույսի կամուրջ» ՀԿ

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### COVID-19 համավարակի արդյունքում ՔՀԿ գործողություններում առաջացած փոփոխությունները

COVID-19 սահմանափակումներն ազդել են բոլոր կազմակերպությունների գործունեության վրա: Տուժել են նաև Հայաստանում ՀՈւԱ-ների հետ աշխատող բոլոր ՀԿ-ները: Առաջին փուլում, երբ Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն, բոլոր ՀԿ-ների գործունեությունը կրճատվեց:

Շահառուներին դեմ առ դեմ ծառայություններ մատուցող ՀԿ-ները փորձեցին դիմակայել սահմանափակումներին և շարունակել ծառայությունների մատուցումը, բայց 2020 թվականի մարտ-օգոստոս ամիսներին հայտարարված արգելափակման ընթացքում դա անհնար էր:

Գործունեության դադարեցումը հատկապես խնդրահարույց էր այն ՀԿ-ների համար, որոնք տրամադրում էին թերապևտիկ և վերականգնողական ծառայություններ ՀՈՒԱ-նց, քանի որ թերապիան և վերականգնումը շարունակական գործընթացներ են, և ցանկացած ընդհատում կարող է վնասել գործընթացին: Ավելին, ՔՀԿ-ները զրկվեցին պետական պաշտոնյաների, ՀԿ ներկայացուցիչների, այլ հիմնական շահագրգիռ կողմերի հետ հանդիպելու հնարավորություններից, ինչը նույնպես սահմանափակեց նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին:

*«2020 թվականի փետրվարին մենք սկսեցինք մեր մեծ նախագիծը: ՀՈՒԵ, հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների համար ծառայությունների մատուցման լայն շրջանակը պետք է սկսվեր 2020 թվականի մարտ ամսից, բայց այն պետք է հետաձգվեր կարանտինի պատճառով: Այսպիսով, մենք ամբողջովին վերափոխեցինք մեր նախագիծը: Մեր դոնորները մեզ ընձեռեցին այդ հնարավորությունը և ասացին, թե ինչը կարելի է փոխել: Եթե մենք չունենայինք այդ հնարավորությունը, մենք պարզապես կդադարեցնեինք ծրագիրը, քանի որ ծառայությունների մատուցումն այլևս անհնար կլիներ: Նոր նախագիծը նոր մարտահրավերներ առաջացրեց: Վարքագծային խնդիրներ ունեցող մեր շահառուները չէին կարող երկար նստել նույն դիրքում և կենտրոնացած մնալ մասնագետի հետ աշխատանքի վրա: Այսպիսով, մենք անցանք անհատական առցանց աշխատանքին: «Zoom» հարթկի կիրառումը նույնպես բարդությունների հետ էր կապված: Ոչ բոլոր երեխաները գիտեին, թե ինչպես աշխատել համակարգչով, նրանցից շատերը նույնիսկ չունեին համակարգիչ, իսկ հեռախոսների օգտագործումը նրանց համար էլ ավելի դժվար կլիներ: Բայց ՀՈՒԵ այս հարցում օգնեցին նրանց ծնողները: Մենք աշխատում էինք առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան 11-ը: Մեր թիմը պետք է համաձայնեի այս կարգի աշխատանքային գրաֆիկին, քանի որ այլ տարբերակ չկար: Աշխատանքի ընթացքում ՀՈՒԵ-ները բոլորը միասին էին խոսում՝ եռապատկելով մեր աշխատակիցների ծանրաբեռնվածությունը: Մենք բոլորս հավատում էինք, որ միշտ պետք է լինենք մեր երեխաների կողքին: Ըստ էության, մենք պլանավորել էինք 70-75 երեխաների համար կազմակերպել ամառային*

դպրոց, սակայն քանի որ մենք ամբողջ ծրագիրը վերափոխեցինք և անցանք անհատական դասընթացների, 75-ից միայն 40-43 երեխան մասնակցեց պրոյեկտին: Եվ դա մեր համար լուրջ խնդիր էր ծրագրային նպատակների առումով»: («Մենք կարող ենք» ՀՈԻԱԿ)

“Մենք զբաղվում ենք առողջական խնդիրներով և վերականգնմամբ, շահառուների հետ անմիջական շփման մեջ ենք: Կարանտինի ընթացքում մենք շարունակեցինք աշխատել մեր այն շահառուների հետ, ովքեր հաճախում էին մեր մարզասրահ, բայց շատ պասիվ էինք: Մեր մարզասրահը բաց է շաբաթական 4 օր: Մենք ընդգրկեցինք շատ քիչ մարդկանց՝ պահպանելով անվտանգության կանոնները: Մարզասրահում միաժամանակ մարզվում էր առավելագույնը 2 հոգի: Քանի որ բոլոր պետական հաստատությունները փակ էին, մենք փորձեցինք բաց լինել շատ փոքր աշխատակազմով հատուկ նրանց համար, ովքեր վերականգնման մեծ կարիք ունեին՝ շատ ուշադիր հետևելով ԱՀԿ-ի՝ հեռավորության պահպանման և ախտահանման վերաբերյալ առաջարկություններին: Վերականգնումը չպետք է ընդհատվի: Եթե շահառուները բաց են թողնում որոշ վարժություններ, նրանք կարող են բախվել բազմաթիվ խնդիրների: Ոչ ոք չվարակվեց, քանի որ մենք հետևում էինք հիգիենայի պահպանման կանոններին»: («Սկարպ» ՀՈԻԱԿ)

«Մեր ցերեկային կենտրոնը դադարեցրեց իր գործունեությունը կարանտինի ընթացքում, բայց մենք տնային այցելություններ էինք կատարում, քանի որ մեր ծրագրերը կարիք ունեն շահառուների հետ դեմ առ դեմ հաղորդակցման և մենք չենք կարող թերապիան առցանց անցկացնել: Սկզբում մենք որոշ դժվարություններ ունեցանք, այնուհետև փորձեցինք երեխաներին բերել կենտրոն և հեռավորություն պահպանելով՝ հետևել COVID-19 կանոններին: Մենք գրասենյակ վերադարձանք 2020 թվականի ամռանը: Այս բացթողումը վատ ազդեցություն ունեցավ մեր աշխատանքի արդյունավետության և մեր շահառուների արդյունքների վրա: Մեր աշխատանքը շատ անարդյունավետ գնահատվեց»: («Հույսի Մեծամոր» ՀԿ)

«Համավարակը բացասական ազդեցություն ունեցավ մեր կողմից մատուցվող ծառայությունների ծավալի և որակի, ինչպես նաև որոշումների կայացման վրա: Մենք փորձեցինք դիմադրել, քանի դեռ խստիվ արգելված չէր օֆլայն միջոցառումների կազմակերպումը: Հետո անցանք հեռավար ռեժիմի, որը շահառուների հետ կենդանի շփման հնարավորություն չէր տալիս: Զույմ հարթակը չի կարող համարվել նույնքան արդյունավետ, որքան ուղիղ հաղորդակցությունը, որի պարագայում կարող ես պնդել քո տեսակետը: Մենք կանգնած էինք շատ մեծ խնդիրների առջև»: («Ունիսոն» ՀՈԻԱԿ)

«Արտակարգ իրավիճակը և համավարակը անսպասելի էին բոլորի համար, ամեն ինչ շատ անորոշ էր, խառնաշփոթ, անհասկանալի իրավիճակ: Ամեն մեկն իր ուրույն ձևով անցավ այդ պրոցեսի միջով»: («Էխո» ՀՈԻԱԿ)

*«Երբ հայտարարվեց կարանտինի մասին, մենք 20 օր տանից աշխատեցինք: Դրանից հետո հասկացանք, որ այլևս հնարավոր չի աշխատել տնից, սոցիալական աշխատողները պետք է անմիջական շփում ունենան շահառուների հետ: Կազմակերպության համար դժվար էր ֆինանսական և կազմակերպչական խնդիրների պատճառով: Կազմակերպությունը պետք է վճարեր աշխատակիցների տաքսիներով տեղաշարժի համար, քանի որ հասարակական տրանսպորտը չէր աշխատում: Դա տևեց մոտ 2-2,5 ամիս»:*  
(«Էխո» ՀՈՒԱԿ)

*«ՀԿ-ները ոչ մի աջակցություն չեն ստացել պետությունից, չնայած մեր գործունեությամբ աջակցում ենք պետությանը: Մենք նույնիսկ չենք դիմել COVID-19 ժամանակ, քանի որ որևէ կարգավորում չկար»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

ՔՀԿ աշխատակիցները նույնպես բախվեցին բազմաթիվ խնդիրների, որոնց թվում են՝

- Աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում տեղափոխման հետ կապված խնդիրներ,
- Դիմակներ կրելու և դրա պատճառով շնչառության հետ կապված խնդիրներ,
- ՀԿ աշխատակիցներին ոչ մի պետական աջակցություն չի տրամադրվել, նրանք ներառված չեն եղել կառավարության փոխհատուցման միջոցառումներում, համավարակի ընթացքում նրանք չեն ստացել որևէ պետական աջակցություն կամ հարկային արտոնություններ, ինչպես դա ստացել են մասնավոր և պետական կազմակերպությունների աշխատակիցները,
- Ապրումներ օֆլայն գործողությունների և միջոցառումների բացակայության պատճառով:

Որոշ դեպքերում ՀԿ (հատկապես՝ ՀՈՒԱԿ) գործունեության դժվարությունները պայմանավորված են եղել կազմակերպությունները ղեկավարող ՀՈՒԱ COVID-19 հիվանդանալով:

*«Մեր աշխատակիցների կեսը վարակվել է COVID-19-ով»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

Ընդհանուր առմամբ, կարանտինը և COVID-19-ի սահմանափակումները բացասաբար են անդրադարձել մատուցվող ծառայությունների գործընթացի, որակի և ծավալի, ինչպես նաև որոշումների կայացմանը մասնակցության վրա: Համապատասխանաբար տուժել են ՔՀԿ աշխատակիցներն ու շահառուները:



#### 44-օրյա Արցախյան պատերազմի արդյունքում ՔՀՀ գործողություններում առաջացած փոփոխությունները

Հայաստանում գործող ՔՀԿ-ները 2020 թվականի սեպտեմբեր ամսին բախվեցին նոր մարտահրավերների Արցախյան 44-օրյա պատերազմի բռնկման պատճառով: Այն բազմապատկեց համավարակի պատճառով առաջացած դժվարությունները՝ լրացուցիչ տնտեսական խնդիրներ ստեղծելով ՔՀԿ համար: Պատերազմի ընթացքում հազարավոր մարդիկ տուժեցին և վիրավորվեցին: Ցավոք, պատերազմի ընթացքում վիրավորվածների և նոր հաշմանդամություն ձեռք բերած անձանց վերաբերյալ պաշտոնական տվյալները դեռևս հասանելի չեն: ՔՀԿ-ները պետք է արագ վերակողմնորոշվեն՝ խոցելիության նոր կարգավիճակ ունեցող տարբեր խմբերին աջակցելու համար. տեղահանված անձինք և ընտանիքներ Արցախից, արցախցի ՀՈՒԱ-ներ, արցախյան պատերազմի ընթացքում վիրավորված և հաշմանդամություն ձեռք բերած զինվորներ, ինչպես նաև թերապիայի և վերականգնման կարիք ունեցող անձինք: Հարկ է նշել, որ ՔՀԿ-ներն այս խմբերի համար նախատեսված ծառայություններ և ռեսուրսներ չեն ունեցել:

Որոշ դեպքերում ՀՈՒԵ-ի հայրերը պատերազմի ժամանակ գորակոչվել են բանակ: Դա ավելի խոցելի է դարձրել նրանց ընտանիքները: Այս առումով դիտվում է օրենսդրական կարգավորումների վերանայման անհրաժեշտություն:

*«Երկու երեխաների միայնակ հայրը, ում երեխաներից մեկն ուներ հաշմանդամություն, ևս գորակոչվել էր բանակ: Չնայած այն հանգամանքին, որ նա ներկայացրել էր իր խնամքի տակ ՀՈՒԵ ունենալու փաստը, սակայն նրան ոչինչ չօգնեց այս հարցում»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

Պատերազմի պատճառով նոր խոցելի խմբեր են առաջացել: Հոգեբանական օգնության և աջակցության կարիք ունեցող մարդկանց թվաքանակը խիստ աճել է: Արցախից տեղահանվածները տարբեր կարիքներ ունեն: Օրինակ, նրանցից շատերն ունեն մասնագիտություններ, բայց չունեն գործիքներ, սարքավորումներ, որպեսզի կարողանան աշխատել: Պատերազմի ընթացքում վիրավորված զինվորները պետության կողմից ստանում են խիստ սահմանափակ աջակցություն, բայց դեռ չեն կարող վերադառնալ իրենց սովորական կյանքին:

*«ՀՈՒԵ մայրերի համար մենք ունեինք մասնագիտական ուսուցման ծրագիր: Էմոցիոնալ առումով շատ ծանր էր նրանց հետ աշխատելը, քանի որ նրանց ամուսինները պատերազմում էին: Իհարկե, մենք շարունակեցինք դասընթացները, որպեսզի այդ կանայք դուրս գան տնից և ինչ-որ բանով զբաղվեն, նոր մասնագիտություն ձեռք բերեն: Ռմբակոծության ռիսկ կար, սակայն մեր թաղամասում ապաստարաններ չկային: Ինչևէ, մենք շարունակեցինք աշխատել 14 կանանց հետ»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

*«44-օրյա պատերազմի ժամանակ մեր ՀԿ-ն ինքնակազմակերպվեց: Մենք մեր ծրագրերում ընդգրկեցինք Արցախից տեղահանված ընտանիքներին, քանի որ Մեծամորում տեղափոխվածները շատ էին: Նրանք դեռևս շարունակում են այստեղ մնալ և ապրում են հյուրանոցի շենքում ու տարբեր կացարաններում:*

*Մենք պատրաստ չէինք նման աշխատանքին: Հուզական առումով նույնպես դժվար էր: Մենք համագործակցեցինք մարզպետարանի, ՏԻՄ-երի հետ, երեխաներին ընդգրկեցինք մեր խմբերում, մեզ դիմեցին այլ կազմակերպություններ, այլ աջակցություն նույնպես կար: Մենք կազմակերպել ենք խմբային և ճամբարային աշխատանքներ: Արցախյան ընտանիքների մեջ կային խոցելի ընտանիքներ, ՀՌԲ, կորուստներ ունեցած ընտանիքներ: Բոլորը հոգեբանական լուրջ աջակցության կարիք ունեն: Այդ պատճառով մենք գտանք մարդկանց և դիմեցինք այն կազմակերպություններին, որոնք կարող էին օգնել նրանց: Կային նաև սայլակների և օժանդակ սարքավորումների կարիք ունեցող մարդիկ, կային նպաստների հատկացման խնդիրներ երեխաների և տարեցների համար: Նրանց աջակցելու նպատակով մենք փորձեցինք օպերատիվ կերպով աշխատել նախարարությունների, նախաձեռնող խմբերի և ՀԿ-ների հետ»:*  
(«Հույսի Մեծամոր» ՀԿ)

*«Մենք ունենք զինվորներ, ովքեր պատերազմից հետո հաշմանդամություն են ձեռք բերել: Մեր մասնագետներն կատարել են տունայցեր 113 զինվորների, իրականացրել կարիքների գնահատում և գրանցել նրանց խնդիրները»:* («Հույսի Մեծամոր» ՀԿ)

*«Այժմ մենք չենք աշխատում Արցախյան պատերազմի ընթացքում վիրավորում ստացածների հետ: Միայն բուժման գործընթացից հետո զինվորները կգան մեր կազմակերպություն վերականգնման նպատակով»:* («Սկարպ» ՀՌԲԱԿ)

Պատերազմի ընթացքում և դրանից հետո ավելացավ ՔՀԿ զանգերի և դիմումների թիվը: ՔՀԿ-ները նրանց տրամադրեցին տեղեկատվական աջակցություն և ուղղորդեցին՝ որտեղ և ինչպես կարող են դիմել իրենց խնդիրներով: Որոշ դեպքերում դիմումատուներն ուղղորդվում էին այլ մասնագետների և կազմակերպությունների մոտ, որոնք կարող էին ավելի օգտակար լինել այդ հարցերում:

ՔՀԿ-ներին անհրաժեշտ էր ռեսուրսներ գտնել, վերանայել և/կամ վերափոխել իրենց ծառայությունների բնույթը, նախագծել նոր ծառայություններ, միջոցներ հայթայթել նոր շահառուներին աջակցելու նպատակով: «Սկարպ» ՀՌԲԱԿ-ը քարտեզագրել է պատերազմի ժամանակ ապաստարանները: Ապաստարանները և դրանց մուտքերն ապահովված չեն սայլակ օգտագործող մարդկանց համար անհրաժեշտ հարմարությունները:

Հետազոտության ընթացքում հարցվածները նշել են դրական խտրականության որոշ դեպքեր, որոնք կարևորում են այն ՀՌԱ-ներին, ովքեր վիրավորվել են Արցախում 44-օրյա պատերազմի ընթացքում: Օրինակ՝ Երևանի քաղաքապետարանը հայտարարել է, որ վերելակներ պետք է տեղադրվեն առաջին հերթին այն շենքերում, որտեղ վիրավոր զինվորներն են ապրում: ՀՌԱ համայնքը դա դիտարկել է որպես անտեղի և չհիմնավորված որոշում:

*«Դա, այսպես ասած, տհաճ, բայց դրական խտրականություն է, քանի որ զինվորներին հարգելու համար անտեսվեցին այն ծնողի իրավունքները, որն իր երեխային 15 տարի շարունակ ձեռքերի վրա է տեղափոխում»:* («Էխո» ՀՌԲԱԿ)

## Համավարակի պատճառով ՀՈւԱ առջև ծառայած խնդիրները

Համավարակի և պատերազմական ճգնաժամերի պատճառով ՀՈւԱ-ներն ավելի շատ են տուժել, քան մյուս քաղաքացիները, քանի որ նրանք գտնվում են ամենաբարձր ռիսկի խմբում: ՀՈւԱ ընտանիքի անդամները առօրյա կյանքում բազմաթիվ մարդկանց հետ են շփվում և գործնականում անհնար է մեկուսանալ և կանխել ՀՈւԱ վարակումը: ՀՈւԱ-ները ավելի մեծ դժվարությունների են հանդիպում նոր իրավիճակներին հարմարվելու առումով՝ դիմակ կրել, ախտահանել և այլն: Նրանցից շատերը մտավախություններ ունեն պատվաստումների վերաբերյալ: Մի կողմից՝ նրանց վարակվելու ռիսկն ավելի բարձր է, մյուս կողմից՝ COVID-19-ի բռնկումից ի վեր ՀՈւԱ էլ ավելի են մեկուսացել, քան նախկինում:

Հարցվածների կողմից բացահայտվել են նաև համավարակի ընթացքում ՀՈւԱ շրջանում առավել խոցելի խմբերն ու նրանց հատուկ կարիքները:

Սայլակ օգտագործողների համար ձեռնոցների և դիմակների պարտադիր կրումը ամեն ինչ ավելի բարդացրեց, քանի որ սայլակները հիմնականում ձեռքերով են կառավարվում և գործնականում անհնար է դրանք ձեռնոցներով և դիմակներով քշել, դա լուրջ ջանքեր է պահանջում, ինչպես սպորտով զբաղվելը: Կառավարության կողմից նրանց կարիքները բավարարելու համար անհատական և կարիքների վրա հիմնված մոտեցում չի կիրառվել:

Միայնակ ապրող ՀՈւԱ-նք նույնպես բարձր ռիսկի խումբ են, քանի որ նրանք կարանտինի ընթացքում չէին կարող օգտվել տրանսպորտից, իսկ խանութներն ու տարբեր ծառայությունները պարզապես փակ էին:

ՀՈւԵ խիստ տուժցին կրթական ծառայությունների առցանց հարթակներ անցնելու պատճառով, նրանք զրկված էին տարբեր կազմակերպությունների կողմից մատուցվող ցերեկային խնամքի ծառայություններից, կապը հաստատվում էր առցանց և հիմնականում ծնողների հետ, այլ ոչ թե ՀՈւԵ հետ: Առցանց դասերը շատ խնդրահարույց էին հատկապես տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող ՀՈւԵ համար, կամ այլ խնդիրներ ունեցող, որոնք դժվարացնում կամ անհնար են դարձնում երկար ժամանակ էկրանի առջև գտնվելը: Օրինակ՝ «Zoom» հարթակից օգտվելը նրանց համար անհնար էր: Վարքագծային խնդիրներ ունեցող, ինչպես նաև համակարգչից կամ հեռախոսից կախվածություն ունեցող երեխաները թերապիա էին անցնում դեռևս համավարակից առաջ, իսկ առցանց կրթությունը խաթարեց այդ աշխատանքը:

*«Մենք տանը մնացինք 1,5 ամիս, ինչը շատ ազդեց մեր շահառուների վրա (աուտիզմ ունեցող երեխաներ), քանի որ նրանք թերապիա չստացան և դասերին չմասնակցեցին: Սովորաբար մենք սահմանափակում ենք նրանց համակարգիչներից օգտվելու ժամանակը, քանի որ նրանք հաղորդակցության խնդիրներ ունեն: Առցանց դասերի պատճառով նրանք կորցրեցին կարանտինից առաջ ձեռք բերած հմտությունները»: («Սովորեցրու ինձ ավելին» ՀԿ)*

Լսողության խանգարումներ ունեցող այն ՀՈՒԱ-ների համար, ովքեր շրթունքների ընթերցմամբ են խոսքը հասկանում՝ տեսողականորեն մեկնաբանելով շուրթերի, դեմքի և լեզվի շարժումները, պետք է բացառություններ արվեին դիմակ կրելու վերաբերյալ կանոնակարգերում: Նրանք գրկված էին շփումից և հաղորդակցումից, քանի որ մյուս մարդիկ կրում էին դիմակներ:

ՀՈւԱ-ներն արդեն իսկ բախվում էին առողջապահության, կրթության, եկամուտների և զբաղվածության, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերի անհասանելիության կամ ցածր հասանելիության խնդիրների հետ: COVID-19 ճգնաժամն ավելի է խորացնում այդ մարտահրավերները: Այն սահմանափակումները, որոնք պետության կողմից ներկայացվել են որպես համավարակի ընթացքում պաշտպանական միջոցներ, ազդել են ՀՈւԱ կյանքի տարբեր ոլորտների վրա և այն ավելի դժվարեցրել համավարակի ընթացքում:

Հարցվածները հայտնում են, որ ՀՈւԱ ֆինանսական լուրջ խնդիրներ են ունեցել կառանտինի ժամանակ:

Վերականգնողական կենտրոնները փակվեցին, և ՀՈՒԱ չստացան անհրաժեշտ վերականգնողական ծառայություններ կամ դրանք հետաձգվեցին, ինչը որոշ դեպքերում անընդունելի էր և խիստ ազդեց ՀՈւԱ առողջության և վերականգնման գործընթացի վրա:

Պլանավորած վիրահատությունները չեղարկվեցին, ինչը որոշ դեպքերում նույնպես կենսական նշանակություն ունեցավ:

ՀՈւԱ խնդիրներ ունեցան, երբ հասարակական տրանսպորտի երթևեկությունը դադարեցվեց, քանի որ նրանք մնացին մեկուսացած իրենց համայնքներում և չկարողացան դիմել իրենց անհրաժեշտ ծառայություններին:

Համավարակի ընթացքում լրատվամիջոցների կողմից օգտագործվող իրավական բառապաշարը պարզ չէր մարդկանց և հատկապես ՀՈւԱ համար, շատ բաներ հստակ բացատրված չէին:

### **Համավարակի ընթացքում ՀՈւԱ պետական աջակցությունը**

ՀՀ կառավարությունը սահմանեց կորոնավիրուսի սոցիալական հետևանքները չեզոքացնելու 22 միջոցառումներ: Դրանցից ոչ մեկն ուղղված չէր հաշմանդամություն ունեցող անձանց: Համավարակի ընթացքում նույնպես հատուկ ծրագրեր չեն ներդրվել ՀՈւԱ համար:


ՔՀԿ ներկայացուցիչներից շատերը հայտնում են, որ ՀՈՒԱ համար օգնության տարբեր միջոցներ չեն ապահովվել Հայաստանում կարանտինի և համավարակի ժամանակ: Դեղորայք և սարքավորումներ, վերականգնողական ծառայություններ ընդհանրապես չեն տրամադրվել: Հարցվածներից մեկը հայտնել է, որ տրամադրվել են անձնական

օգնականներ, մյուս 8-ը այլ փորձառություն ունեն այս հարցում՝ անձնական օգնականները հասանելի չեն եղել:

*«Աուտիզմով երեխայի ընտանիքը վարակված էր, հայրը տեղափոխվեց Ապարան, մայրը նույնպես պետք է հիվանդանոց տեղափոխվեր: Նա չգիտեր՝ որտեղ թողնել իր երեխային: Նման դեպքերում պետությունը պետք է աջակցություն ցուցաբերի»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

Որոշ չափով ապահովված էին օժանդակ տեխնոլոգիաները, սնունդը և անհրաժեշտ պարագաները, ժեստերի լեզվով թարգմանությունը և պարզեցված տեղեկատվության հասանելիությունը (տե՛ս գծապատկեր 1):

**Գծապատկեր 1.** ՀՈՒԱ համար առկա օգնությունը կարանտինի և համավարակի ժամանակ (հարցվածների թիվ):




ՔՀԿ ներկայացուցիչները հայտնում են սոցիալական պաշտպանության շատ քիչ միջոցառումների մասին, որոնք ՀՀ կառավարությունը ձեռնարկել է ՀՈՒԱ աջակցելու համար COVID-19 բռնկումից ի վեր: Խնամքի ապահովման համար լրացուցիչ ֆինանսավորման կամ համավճարի մեխանիզմներ չեն ներդրվել: ՀՈՒԱ ընտանիքի անդամներին լրացուցիչ ֆինանսական օգնություն չի տրամադրվել վարակի վտանգը կանխելու համար: ՀՈՒԱ կարիքների գնահատում չի կատարվել: ՀՈՒԱ վերաբերյալ մանրամասն տվյալների բացակայությունը խոչընդոտում է համավարակի ազդեցության ծավալը լիովին գնահատելու հարցում և նպաստում է ՀՈՒԱ կյանքի փորձի ու համայնքում ներդրման թերագնահատմանը:

Հարցվածներից մեկի կարծիքով՝ պետության կողմից տրամադրվել է միանվագ ֆինանսական օգնություն բոլոր ՀՈՒԱ-նց: Հարցվածներից ևս մեկը հայտնել է, որ առցանց վճարումների հնարավորություններն ընդլայնվել են վարակի վտանգը

կանխելու համար: Մեկ այլ հարցվող նշել է, որ տարբեր տվյալների բազաներ են համադրվել, որի արդյունքում իրականացվել է ՀՈւԱ արագ գրանցում՝ նպատակային աջակցության գործընթացը հեշտացնելու համար: 2 հարցվողներ հայտնել են հաշմանդամության նպաստների մասնակի ավելացման և COVID-19-ի հետ կապված լրացուցիչ ծախսերի փոխհատուցման մասին: Եվս 2 հարցվողներ նշել են, որ ՀՈւԱ համար նյութական աջակցությունը (սնունդ և պարագաներ) տրամադրվել է պետության կողմից այն դեպքերում, երբ նրանք դիմել են պետությանը կամ բողոքել են (տե՛ս գծապատկեր 2):

**Գծապատկեր 2.** ՀՀ կառավարության կողմից COVID-19-ի բռնկումից ի վեր ձեռնարկված սոցիալական պաշտպանության միջոցառումները համայնքում բնակվող ՀՈւԱ աջակցելու համար (հարցվածների թիվ):



Հարցվածներից ոմանք շեշտեցին, որ հաշմանդամություն ունեցող անձինք համավարակի ընթացքում չեն կարողացել ստանալ լրացուցիչ պետական ֆինանսական աջակցություն, քանի որ ստանում են կենսաթոշակ: Պետական կենսաթոշակների մասին օրենքի 7-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն «պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ»<sup>2</sup>: Փաստացի համավարակի ընթացքում ՀՈւԱ աջակցելու համար պետության կողմից պետական լրացուցիչ օգնություն չտրվեց:

9 հարցվածներից 5-ը նշել են, որ ՀՀ կառավարությունը որևէ միջոց չի ձեռնարկել համայնքում ապրող ՀՈւԱ կյանքը, առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու համար: 3 հարցվածներ հայտնեցին, որ այս առումով կառավարության կողմից ձեռնարկվել են որոշ, բայց ոչ բավարար միջոցներ: Իսկ հարցվածներից մեկը տեղյակ չէր, թե արդյոք կառավարությունը որևէ միջոցներ ձեռնարկել է, թե ոչ:

*«Որոշ դիմակներ և ձեռնոցներ տրամադրվել են պետության կողմից»: («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

*«Կառավարությունը նույնիսկ ավելի քիչ է աջակցել համայնքում ապրող ՀՈւԱ-նց, քան հաստատություններում ապրողներին»: («Ունիսոն» ՀՈԻԱԿ)*

*«Եթե ՀՈւԱ զանգահարում էր թեժ գիծ, միգուցե որոշակի աջակցություն ստանար, բայց եթե չկարողանար զանգահարել, ոչինչ էլ չէր ստանա»: («Էխո» ՀՈԻԱԿ)*

9 հարցվածներից 4 -ը նշել են, որ իրենց համայնքներում ՀՈւԱ կամ ՀՈւԱ որոշակի խմբերի համար նախատեսված չեն եղել որևէ պաշտպանական միջոցառումներ (դիմակներ, ձեռնոցներ, ախտահանիչ լուծույթներ, մուտքի դռների, թեքահարթակների կամ սանդուղքների բազրիքների ախտահանում և այլն): 4 այլ հարցվածներ հայտնել են, որ իրենց համայնքներում որոշ չափով իրականացվել են պաշտպանական միջոցառումներ ՀՈւԱ համար: Եվ միայն մեկ հարցվող է նշել, որ իրենց համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվել են էական պաշտպանական միջոցառումներ:

*«Դպրոցում, որտեղ սովորում է որդիս, ամեն ինչ ախտահանվել է: Դպրոցական թեքահարթակները ախտահանվել են, երեխաները դիմակներ են ստացել օրական երկու անգամ: Բայց ես տեղյակ չեմ այլ վայրերի մասին»: («Մենք կարող ենք» ՀՈԻԱԿ)*

9 հարցվածներից 6-ը նշել են, որ կառավարության կողմից հեռավոր գյուղական համայնքներում ապրող ՀՈւԱ կյանքի, առողջության և անվտանգության պաշտպանության որևէ միջոցներ չեն ձեռնարկվել: Հարցվողներից մեկը պատասխանել է, որ որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ են ձեռնարկվել, իսկ 2

<sup>2</sup> ՀՀ պետական կենսաթոշակների մասին օրենք, հոդված 7, կետ 3, ընդունված է 22.12.2010 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64540>):

հարցված տեղյակ չեն եղել, որ այս առումով կառավարության կողմից ձեռնարկված որևէ միջոցառում կա:

9 հարցվողներից 4-ը նշել են, որ պետական կամ մասնավոր հաստատություններում և համայնքներում ՀՈւԱ համար հասանելի են եղել բողոքների անկախ մեխանիզմներ և փաստաբանների ծառայություններ: Հարցվածներից մեկը նշել է, որ հասանելի են եղել միայն առցանց բողոքարկման մեխանիզմները, իսկ մեկ ուրիշը պատասխանել է, որ ո՛չ բողոքների մեխանիզմները, ո՛չ փաստաբանների ծառայությունները մատչելի չեն ՀՈւԱ համար: 3 հարցվողներ չեն կարողացել պատասխանել հարցին:

*«Մենք օրական մոտավորապես 50 զանգ էինք ստանում, և մեր փաստաբանները պատասխանում էին հարցերին»:* («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)

*«Թեժ գծերը կարանտինի ընթացքում այնքան ծանրաբեռնված էին, որ անհնար էր նրանց հետ կապ հաստատելը»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«ՀՈՒԱ կարող էին միայն առցանց բողոքել: Իրականում, ավելի շատ մարդիկ սկսեցին օգտագործել առցանց ռեժիմը: Եթե նրանց համար դժվար է լինում, փորձում են գտնել մեկին, ով կարող է օգնել նրանց »:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«Կան բողոքների որոշ մեխանիզմներ և իրավական աջակցություն, բայց դրանք իրականում հասանելի չեն և չեն ապահովում գաղտնիություն»:* («Ունիսոն» ՀՈՒԱԿ)

9 հարցվածներից 3-ը հայտնել են, որ տեղյակ են այն դեպքերից, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, նրանց օգնականներն ու խնամողները տուգանվել են արտակարգ դրության կանոնները խախտելու, դիմակ չկրելու համար: Մնացած 6 հարցվածները տեղյակ չեն եղել նման դեպքերի մասին:

*«Ես երկու անգամ տուգանվել եմ դիմակ չկրելու համար»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«Լսողության խնդիրներ ունեցող մեր երիտասարդ շահառուն տուգանվեց պաշտպանիչ դիմակ չկրելու համար: Դա բողոքարկվեց, տուգանքը չեղարկվեց փաստաբանի աջակցությամբ և ՀԿ-ներում նրա ծանոթության արդյունքում: Հակառակ դեպքում՝ նրանք պետք է տուգանք վճարեին»:* («Ունիսոն» ՀՈՒԱԿ)

Հարցվածները նաև նշեցին, որ նախքան 2020 թվականի հունիսի 20-ի խորհրդարանի ընտրությունները որոշ ճշտումներ են կատարվել ընտրողների համար: ՀՈւԱ թույլատրվել է քվեարկել օգնականի աջակցությամբ, սակայն տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար բրայլյան գրքույկ չի եղել:

*«Ընտրություններին որդիս քվեարկեց: Նա գրել չգիտի, բայց ունի ստորագրություն: Նա կարևորեց իր կյանքի համար ընտրությունը »:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)



## Համավարակի ընթացքում հաստատություններում ապրող ՀՈւԱ պաշտպանությունը

9 հարցվածներից 2-ը նշել են, որ ՀՀ կառավարությունը զգալի միջոցներ է ձեռնարկել հաստատություններում ապրող ՀՈւԱ կյանքի, առողջության և անվտանգության ապահովման համար: 4 հարցվածներ հայտնել են, որ այս առումով կառավարության կողմից ձեռնարկվել են որոշ միջոցներ, իսկ 3 հարցված տեղյակ չեն եղել, թե արդյոք կառավարությունը միջոցներ ձեռնարկել է, թե ոչ:

*«Կառավարության կողմից ձեռնարկվեցին որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ հաստատություններում ապրող ՀՈւԱ կյանքը, առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար: Օրինակ, հաստատությունները նույնիսկ չտեղադրեցին հաշմանդամություն ունեցող անձանց այցելուներից պաշտպանելու համար անհրաժեշտ ապակե սալերը, այնինչ պաշտպանության առկայության դեպքում նրանց կարող էին այցելել հարազատները»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«Մեր շահառու ծնողներից մեկը որդի ունի, ով ապրում է հաստատությունում: Նա ամեն շաբաթ այցելում էր նրան, սակայն կարանտինի պատճառով նրանք մի քանի ամիս չեն տեսնվել, ինչն անդրադարձավ նրանց հարաբերությունների վրա: Նա լուրջ հոգեբանական խնդիրներ ունի»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

9 հարցվածներից 5-ը նշել են, որ կառավարությունն արգելել է կամ սահմանափակել է արտակարգ դրության ժամանակ ՀՈՒԱ դուրս գալը սոցիալական խնամքի հաստատություններից: Հարցվածներից մեկը պատասխանեց, որ ՀՈւԱ դուրս գալը արգելված չի եղել, իսկ մնացած 3 հարցվածները տեղյակ չեն եղել հաստատությունների որևէ կանոնակարգի վերաբերյալ: Պաշտպանական միջոցառումների և սահմանափակումների վերաբերյալ որոշումներն ընդունվել են հաստատություններից յուրաքանչյուրի կողմից առանձին, այլ ոչ թե կառավարության կողմից:

9 հարցվածներից 6-ը նշել են, որ կառավարությունը սահմանափակել կամ արգելել է ընտանիքի անդամների, ընկերների կամ այլոց այցելությունները սոցիալական խնամքի հաստատություններ, որտեղ ապրում են նրանց հետ առնչություն ունեցող ՀՈւԱ: Հարցվածներից մեկը պատասխանել է, որ կառավարության կողմից որևէ սահմանափակում չի կիրառվել, մնացած 2 հարցվածները տեղյակ չեն եղել հաստատություններում որևէ կանոնակարգի վերաբերյալ:

### ՀԿ-ների կողմից ՀՈւԱ տրամադրված աջակցությունը

Համավարակի ընթացքում գրեթե բոլոր ՔՀԿ-ները աջակցել են ՀՈւԱ՝ օգտագործելով մասնավոր նվիրատվություններն ու բարեգործական ֆինանսավորման միջոցները: Հասարակական կազմակերպություններից շատերը սնունդ, հիգիենիկ պարագաեր և այլ անհրաժեշտ ապրանքներ էին տրամադրում հաշմանդամություն ունեցող անձանց:

Ումանք նաև համակարգիչներ և պլանշետներ են տրամադրել երեխաների համար, որպեսզի նրանք կարողանան մասնակցել առցանց դասերին:

ԱՍՀՆ դիմել է որոշ ՀԿ-ների և պատվիրակել է նրանց որոշակի ծառայություններ: Օրինակ, ԱՍՀՆ տեղեկացրել է «Հուլիսի Մեծաամոր» ՀԿ-ին, որ ՀՈՒԵ-ները Արցախից տեղափոխվել են առանց որևէ օժանդակ սարքերի, սայլակների, քայլակների: ՀԿ կազմակերպեց տնային այցելություններ, որպեսզի կարիքները գնահատի և սկսի օգնել: Արդյունքում, 18 երեխաներ ստացան օժանդակ սարքավորումներ:

*«Հիմնականում սայլակներ էին անհրաժեշտ, իսկ դրանց արժեքը մոտ 150 000 դրամ է: ԱՍՀՆ այդ գործունեությունը պատվիրակեց մեր ՀԿ-ին, քանի որ մեր կազմակերպությունն աշխատում է երկու հիմնական ուղղություններով՝ ուղեղային կաթված ունեցող երեխաների ընտանիքների շահերի պաշտպանություն և աջակցություն: Մենք ամբողջ Հայաստանում ունենք ուղեղային կաթվածով 200 շահառու»:* («Հուլիսի Մեծաամոր» ՀԿ)

Այլ հասարակական կազմակերպություններ պատերազմի ժամանակ իրենք իրենց միջոցները մոբիլիզացրեցին կարիքավոր մարդկանց օգնության ձեռք մեկնելու և աջակցելու համար:

*«Պատերազմի ժամանակ մենք փորձում էինք օգնել սայլակներով և հենակներով: Մենք փորձում էինք լրացնել բացը, օգնել տեղահանվածներին և վիրավոր զինվորներին: Իրականում նրանց համար ոչինչ չի արվում պետության կողմից: Մենք աջակցության համար դիմեցինք մի քանի այլ հասարակական կազմակերպությունների: Մենք նույնպես փորձեցինք ազդել ԱՍՀՆ վրա, որոշ դեպքերում դա օգնեց, իսկ որոշ դեպքերում այլ ՀԿ-ները լուծեցին խնդիրը»:* («Ունիստն» ՀՈՒԱԿ)

*«Մենք պլանշետներ բաժանեցինք մեր շահառուների համար, որպեսզի նրանք կրողանան դասերին մասնակցել: Մենք տրամադրեցինք պարենային օգնություն և հիգիենայի պարագաներ: Համավարակի ընթացքում երկու անգամ սննդամթերքի օգնություն ենք տրամադրել 200 շահառուների: Կազմակերպել ենք բաց դրամահավաք, որտեղ նվիրաբերել են անհատներ ու տարբեր կազմակերպություններ»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«Մենք կարանտինի ընթացքում իրականացրել ենք 2 ծրագիր: Մեկ դրամաշնորհ տրամադրվել է Գերմանիայի դեսպանատան կողմից: Մենք տրամադրեցինք դեղամիջոցներ և ուղղորդեցինք ՀՈւԱ համապատասխան բուժհաստատություններ: Մեկ այլ ծրագիր շնորհվեց Կանանց հիմնադրամի կողմից: Մենք տրամադրեցինք սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ կանանց և միայնակ մարդկանց համար»:* («Հուլիսի Մեծաամոր» ՀԿ)

*«Մենք ԵՄ-ից ստացած ֆոնդի միջոցներով շահառուներին տրամադրեցինք պաշտպանիչ և հիգիենիկ պարագաներ (ձեռնոցներ, դիմակներ և ախտահանիչ նյութեր)»:* («Ունիստն» ՀՈՒԱԿ)

Հասարակական կազմակերպությունները նաև որոշակի տեղեկատվություն են տրամադրել իրենց շահառուներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ պաշտպանական միջոցառումների վերաբերյալ:

*«ԱՀԿ կայքից որոշ թարգմանություններ են կատարել ՀՈւԱ պաշտպանության միջոցառումների վերաբերյալ և թարգմանությունը բաժանել են մեր շահառուներին»: («Ունիսոն» ՀՈԻԱԿ)*

### **ՀՈւԱ-ների համար COVID-19-ի բուժման հասանելիությունը**

Համավարակի ընթացքում ՀՈւԱ բախվել են առողջապահական ծառայությունների անհավասար մատչելիության հետ, քանի որ առողջապահական բնույթի տեղեկությունը հասանելի չէր: Միաժամանակ նրանց կյանքի որակի արժևորման և սոցիալական կարևորության մասին գոյություն ունեն որոշակի մշակութային նախապաշարմունքներ:

Հարցվածներին ծանոթ չեն դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամության հիմքով մերժել են բուժում տրամադրելու հարցում: 9 հարցվածներից 3-ը նշել են, որ ՀՈւԱ համար բուժումը հավասարապես մատչելի էր: Մնացած 6 հարցվածները նշել են, որ վստահ չեն, որ բուժումը հավասարապես մատչելի է եղել ՀՈւԱ համար: Հարցվածները նշեցին, որ բոլոր հիվանդների համար նույն բուժման մոտեցումն էր կիրառվում, այնինչ ՀՈւԱ հատուկ բուժման և խնամքի կարիք ունեն, որը չի տրամադրվել բժշկական հաստատությունների կողմից: ՀՈԻԱ համար պոլիկլինիկաների և հիվանդանոցների մատչելիությունը նույնպես ապահովված չէր:

*«Մեր երիտասարդ կին շահառուն չէր կարող այցելել գինեկոլոգին՝ սոնոգրաֆիա անելու նպատակով, քանի որ այդ բաժինը գտնվում էր երկրորդ հարկում, և պոլիկլինիկան այդ առումով բավական ճկուն չէր: Ստիպված նա ծառայությունը ստացել է մեկ այլ համայնքում և կրկին անբավարար և անհասանելի պայմաններում»: («Մենք կարող ենք» ՀՈԻԱԿ)*

*«Ես սարսափում էի որդուս հիվանդանոցի մտքից, որը մտավոր խնդիրներ ունի: Ի՞նչ պետք է անեինք, եթե նա վարակվի: Եթե նա վարակվեր, նա միայնակ կլիներ հիվանդանոցում կամ վերակենդանացման բաժանմունքում: Ես նաև ռիսկային խմբի ներկայացուցիչ եմ: Ես կրկնակի ռիսկի գոտում էի: Որդիս նույնպես պարբերաբար տեղեկություններ էր ստանում, որ ինչ-որ մեկին հիվանդանոց են տեղափոխել: Նա վախենում էր, որ վարակվելու է և միայնակ կհայտնվի հիվանդանոցում»: («Մենք կարող ենք» DPO)*

Համավարակի գազաթնակետին հիվանդանոցներում բուժման մատչելիության հետ կապված խնդիրներ առաջացան, և որոշ ՀՈւԱ-ներ բուժվում էին տանը՝ ըստ բժիշկների ցուցումների:

*«Օրինակ, երբ ես հիվանդացա, ես հայտնեցի, որ իմ ջերմությունը չի իջնում: Մեկուսացած էի: Ավելի էր վատանում վիճակս: Ես գնացի մասնավոր հիվանդանոց, որտեղ բուժումն անմիջապես նշանակվեց: Բայց եթե վստահեի պոլիկլինիկային, ապա թոքաբորբ կգարգանար»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

9 հարցվածներից 4-ը նշել են, որ կառավարությունը որոշ միջոցներ է ձեռնարկել ՀՈւԱ ընդհանուր և մասնագիտացած բժշկական օգնության հասանելիությունը մյուս հիվանդների հետ նույն տեղում ապահովելու համար, սակայն այդ միջոցները բավարար չեն եղել: 2 հարցվածներ հայտնել են, որ կառավարության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել, իսկ 3 հարցված նշեցին, որ տեղյակ չեն:

### **Պետության կողմից պատվիրակված ծառայությունները**

Հետազոտության ընթացքում թիրախավորված 9 ՔՀԿ-ներից 6-ը չեն ստանում պետության կողմից ֆինանսական աջակցություն, 2-ը ստանում են որոշակի ֆինանսական աջակցություն պետությունից, ևս մեկը բխվել է պետական ֆինանսավորման սահմանափակումների հետ:

Այս առնչությամբ ուսումնասիրության ընթացքում ՔՀԿ ներկայացուցիչների կողմից բարձրաձայնվել է հետևյալ խնդիրը՝ այն ՀԿ-ները, որոնք պատվիրակված ծառայություններ էին մատուցում և պետությունից ֆինանսավորում էին ստանում խնդրի առաջ են կանգնել պետական ֆինանսավորման նոր կանոնակարգման պատճառով: Եթե առաջ նրանք ստանում էին պետական ֆինանսավորում պատվիրակված ծառայություններ մատուցելու համար, ապա հիմա պետք է մասնակցեն տենդերի: Շատերը պատրաստ չեն եղել և տենդերը չեն շահել: Որոշ ՔՀԿ-ներ պատվիրակված ծառայություններ էին մատուցում ՀՈւԱ և փորձ ունեին այդ ոլորտում, սակայն նոր կարգավորումների և մրցույթի պահանջների պատճառով որոշ փորձառու ՀԿ-ներ պետությունից ֆինանսավորում չստացան և չեն կարող ծառայություններ մատուցել իրենց շահառուների համար, ինչը չի բխում ՀՈւԱ շահերից և խոչընդոտում է մասնագիտացած խառայությունների մատուցող ՔՀԿ զարգացմանը:

*«Պատվիրակված ծառայություններն այլևս չեն մատուցվում: ՀԿ -ների համար հայտարարվեցին մրցութային փաթեթներ: Մենք անբարենպաստ վիճակում էինք, քանի որ այդ ընթացքում այլ ՀԿ -ների հաջողվեց ստանալ եռամսյակային աջակցություն, և նրանք կարողացան պատրաստել իրենց մրցութային փաթեթները, շարունակեցին ստանալ պետական ֆինանսավորումը: Մենք կորցրեցինք պետական ֆինանսական աջակցությունը»:* («Ունիսոն» ՀՈՒԱԿ)

*«Մենք այս տարի չենք հաղթել մրցույթում, չնայած այժմ մենք ծրագիր ունենք կրթության նախարարության հետ: Մենք դիմում ենք դրամաշնորհների համար, եթե հաղթենք, կունենանք պետական ֆինանսավորում: Մենք աշխատել ենք մեկ տարի և արդեն փորձ ունենք այս ոլորտում, նախարարությունը կարող է մեզ ներառել միջնաժամկետ բյուջետային ծախսերի մեջ: Ես գրել եմ նախարարին իմ*

*մտահոգությունների մասին: Պատասխանն այն էր, որ մենք կարող ենք կրկին դիմել այլ դրամաշնորհի: Բայց մենք սոցիալական և առողջապահական ծառայություններ ենք մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ տարեցների խնամքը բոլորովին այլ ծառայություն է: Մենք հավաստագրված չենք նման ծառայություններ մատուցելու համար: Դա անհնար է: Կարծում եմ, որ ամենափորձառու ՀԿ-ները պետք է ոլորտում պատվիրակված ծառայություններ մատուցեն: Ծառայություններ մատուցող ՀԿ-ն չպետք է փոխվի ամեն տարի: Կարծում եմ, որ ամեն տարի մրցույթ անցկացնելը սխալ է: Մենք տրամադրեցինք 30 շաբաթուրի սոցիալական և հոգեբանական աջակցություն, բայց այս տարի մրցույթը շահեցին նոր կազմակերպություններ: Նրանց ծառայությունները դեռ հաստատված չեն, սակայն նրանք ստացել են ֆինանսավորում: Կարծում եմ, որ այս դեպքում ընթացակարգը սխալ է: Այժմ մենք ծրագրեր չունենք, աշխատում ենք շաբաթական ընդամենը 2 օր: Մեր քաղաքապետարանը աջակցում է մեզ: Այդ կոնկրետ շաբաթուրների համար մեզ անհրաժեշտ են հարմարություններ և մասնագետներ: Այսինքն՝ պետությունը ինչ-որ բան արեց, կիսատ թողեց և ֆինանսավորեց նոր կազմակերպությանը, որը նոր է սկսել խումբ ստեղծել: Կարծում եմ, որ դա սխալ է, արդյունավետությունը գրո է, ֆինանսները «փոշիացված» են: Եթե մեր քաղաքում՝ Մեծամորում, հաղթեր ավելի փորձառու կազմակերպություն, ապա ես կընդունեի այդ փաստը, բայց չգիտեմ, թե որն է ծրագիրը նոր և անփորձ ՀԿ-ին տրամադրելու իմաստը»: («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

Միևնույն ժամանակ, մրցութային գործընթացներին մասնակցելու պահանջները շատ բարդ են փոքր ՀԿ-ների, հատկապես մարզերում գործող տեղական ՀԿ-ների համար: Նրանք չեն կարող բավարարել այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ գրասենյակի պայմանների չափանիշները կամ ինքնաֆինանսավորման և համաֆինանսավորման պայմանը: Սուղ ռեսուրսների պատճառով նրանք չեն կարող ուղղակիորեն մասնակցել մրցույթներին: Սովորաբար միջազգային ՀԿ-ները ստանում են դրամաշնորհներ և իրենց գործառույթները փոխանցում են տեղական գործընկերներին: Պետությունը չի փորձում աջակցել և հզորացնել տեղական ՀԿ-ներին: Տեղական ՀԿ-ները անբարենպաստ վիճակում են, նրանք չեն կարող բավարարել մրցույթի պահանջները, ինչը տեղական ՀԿ-ներին դարձնում է անմրցունակ:

*«Մենք չենք կարող դիմել պետական դրամաշնորհների համար: Մենք գրասենյակ չունենք 2020 թվականից: Մեր հանդիպումները կազմակերպում ենք Սպիտակ քաղաքի հրշեջ բաժանմունքում: Ես մի քանի անգամ դիմել եմ պետական դրամաշնորհների համար. տպավորություն ունեմ, որ նրանք նախապես գիտեն, թե ով է ստանալու դրամաշնորհը: Ամեն անգամ ժամանակ եմ կորցնում Երևան հասնելու, հայտերի փաթեթը հանձնելու և Սպիտակ վերադառնալու համար: 2-3 անգամ դիմեցի, սակայն արդյունք չկա»: («Սպիտակի բազե» ՀՈՒԱԿ)*

Հարցվածների կարծիքով պատվիրակված ծառայությունների շրջանակը պետք է ընդլայնվի երկրում, որպեսզի այն ՀՈԱ, ովքեր չեն կարող դուրս գալ իրենց

համայնքներից, կարողանան գոնե որոշ ծառայություններ ստանալ իրենց համայնքներում: Դա հատկապես տեղին է համավարակի, կարանտինի և մեկուսացման պայմաններում:

### Համավարակի ընթացքում տեղեկատվության հասանելիությունը

9 հարցվածներից 4-ը նշել են, որ պետական աղբյուրներից անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու հարցում որոշակի դժվարությունների են հանդիպել (ներառյալ ֆինանսավորման մասին տեղեկատվությունը): Հարցվածներից մեկը պատասխանել է, որ ինքը բախվել է էական դժվարությունների հետ, մյուսը՝ բազմաթիվ դժվարությունների հետ: Հարցվողներից մեկը չկարողացավ պատասխանել հարցին և միայն 2 հարցվածներ նշեցին, որ դժվարությունները ողջամիտ էին:

Համավարակի ժամանակ տեղեկատվության պակասը նշվել է բոլոր հարցվածների կողմից, ընդ որում, տեղեկատվության տրամադրումը շատ խառնաշփոթ և անհամապատասխան կերպով է եղել: Տեղեկատվության պակասը զգացվել է համավարակի բոլոր փուլերում. վարակի վտանգի կասեցումը, կանխարգելիչ և բուժման միջոցառումները, պատվաստումները, արգելափակումը և դրա հետևանքները և այլն, շփոթեցնող էին ՔՀԿ, նրանց գործունեության և շահառուների համար: Պաշտոնական լրատվամիջոցների տարածած տեղեկատվությունը բավարար չէր ՔՀԿ հետագա գործունեության և ՀՈւԱ աջակցության ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

*«Մենք չհասկացանք, թե ինչ անել: Մենք գիտեինք միայն շատ սովորական բաներ: Քանի որ մենք երկար ժամանակ աշխատում ենք ոլորտում, տեղեկատվություն ենք ձեռք բերել անձնական կապերի միջոցով»: («Սկարպ» ՀՈՒԱԿ)*

*«Ես երբեք չեմ կարողանում գտնել ֆինանսական բնույթի տեղեկատվություն: Ես չկարողացա անգամ տեղեկատվություն գտնել այն մասին, թե երբ կարող ենք վերսկսել մեր գործունեությունը: Ես գրավոր նամակ ներկայացրեցի և պատասխանը ստացա այդ կերպ»: («Սովորեցրու ինձ ավելին» ՀԿ)*

9 հարցվածներից 7-ը նշել են, որ հաշմանդամություն ունեցող անձինք բավարար տեղեկատվություն չեն ստացել այն մասին, թե ինչպես պաշտպանվել COVID-19 վարակից և ինչ անել վարակվելու դեպքում: Հարցվողներից մեկը հայտնել է, որ որոշ տեղեկություններ, այնուամենայնիվ, տրամադրվել են, և միայն մեկ հարցված նշել է, որ տրամադրած տեղեկատվությունը բավարար էր:

COVID-19 տարածումից ի վեր՝ ՀՈւԱ բախվել են արտահայտված խտրականության հետ, չեն ստացել օժանդակ տեխնոլոգիաներ, ժեստերի լեզվով և շոշափելու միջոցով ընթերցվող նյութեր: ՀՈւԱ իրավունքները ոտնահարվել են COVID-19-ով պայմանավորված միջոցառումների և տեղեկատվության փոխանակման պատճառով: Պաշտոնական տեղեկատվությունը չի տարածվել մատչելի ձևաչափերով՝

սահմանափակելով ՀՌԻԱ տեղեկատվություն ստանալու հավասար իրավունքները և բարձրացնելով վարակվելու ռիսկը: ՀՌԱ բավարար տեղեկատվություն չեն ստացել այն մասին, թե ինչպես պաշտպանվել COVID-19 վարակից և ինչ անել վարակվելու դեպքում: Տեղեկատվությունը չի տարածվել ՀՌԻԱ համար մատչելի ձևաչափերով, հասանելի է եղել միայն ընդհանուր միջոցներով տարածվող տեղեկատվությունը: ՀՌԱ-ները ստացան միայն ընդհանուր տեղեկատվություն այն մասին, թե ինչպես պաշտպանվել COVID-19 վարակից և ինչ անել վարակվելու դեպքում:

COVID-19-ով պայմանավորված սահմանափակումները (օրինակ՝ հեռավորության պահպանում և այլն) հարմարեցված չեն եղել ՀՌԱ տարբեր խմբերի համար՝ ստեղծելով հատուկ կարիքներն անտեսելու և տեղեկատվությունից ու քաղաքականությունից ՀՌԻԱ բացառման անցանկալի նախադեպեր: Հատուկ ՀՌԻԱ կարիքներին ուղղված ոչինչ չի արվել: Տարբեր սահմանափակումներով ՀՌԻԱ համավարակի ընթացքում բախվել են տարբեր մարտահրավերների, որոնց լուծումներ այդպես էլ չեն տրվել:

*«Պետությունը հատուկ նախազգուշական միջոցների մասին տեղեկատվություն չի տրամադրել, այսինքն՝ ինչո՞վ է ՀՌԱ-ի պաշտպանությունը տարբերվում հաշմանդամություն չունեցող անձի պաշտպանությունից, ինչպիսիք են՝ սայլակների ախտահանումը կամ հեռավորության պահպանումը, եթե մարդու սայլակը հրում են: Այս առումով, միայն ՀԿ-ները որոշ տեղեկություններ տրամադրեցին: Ես որոշ թարգմանություններ եմ արել ԱՀԿ կայքից և տարածել այն մեր գործընկերների և շահառուների շրջանում»:* («Ունիսոն» ՀՌԻԱԿ)

Տարբեր ՀՌԻԱ համար տեղեկատվության մատչելիություն ապահովող մի քանի միջոցներ կիրառվեցին ԶԼՄ կողմից COVID-19 բուժման և պաշտպանական միջոցառումների մասին տեղեկացնելու վերաբերյալ: 3 հարցվածներ հայտնել են, որ COVID-19-ից պաշտպանական միջոցառումների և բուժման մասին տեղեկատվությունը տրամադրվել է ժեստերի լեզվով: Հարցվածներից մեկը հայտնել է, որ տեղեկատվությունը պարզեցված է եղել, ըստ մեկ ուրիշ հարցվածի՝ տեղեկատվությունը հասանելի է եղել դանդաղ սահող տողով: Հարցվածներից մեկը հայտնել է, որ տեղեկատվությունը մատչելի է եղել տարբեր լեզուներով: 2 հարցվածներ նշել են, որ COVID-19-ից պաշտպանվելու միջոցառումների և բուժման մասին տեղեկատվությունը մատչելի էր հաստատություններում ապրող ՀՌԱ համար: Հարցվածներից մեկը պատասխանել է, որ տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար տեղեկատվական թերթիկներ են տրամադրվել Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից:

*«Ժեստերի լեզվով թարգմանությունը տրամադրել է հեռուստաալիքներից մեկի կողմից»:* («Սկարպ» ՀՌԻԱԿ)

9 հարցվածներից 5-ը նշել են, որ կառավարության կողմից ձեռնարկվել են որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ՝ արտակարգ իրավիճակների սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու վերաբերյալ, ներառյալ հաստատությունների ներսում և հաստատություններից դուրս ապրող ՀՌԱ-ների



համար արտաքին այցելությունների սահմանափակումները: 1 հարցվող հայտնել է, որ կառավարության կողմից ձեռնարկվել են էական միջոցառումներ: Եվս 3 հարցված տեղյակ չեն նման միջոցառումներ մասին: Պետական կազմակերպությունները բավարար տեղեկատվություն չեն տրամադրել ՀՈՒԱ: Վերջիններս սովորաբար այլ մարդկանց կամ կազմակերպությունների օգնության կարիքն ունեն, քանի որ պետք է մի քանի անգամ այցելեն պետական հաստատություններ՝ բավարար տեղեկատվություն կամ աջակցություն ստանալու նպատակով:

*«Տեղեկատվությունը տարածվում էր միայն հեռուստատեսությամբ: Բայց հաստատությունների ոչ բոլոր սենյակներում է առկա հեռուստացույց: Անգամ այդ հաստատությունների միջանցքներում թե՛ զծերի մասին պաստառներ չկան»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

Առցանց հարթակները մատչելի չեն կարդալու և գրելու սահմանափակումներով ՀՈւԱ համար:

*«Օրինակ, e-drafts.am-ը հասանելի չէ ընթերցման և գրելու խնդիրներ ունեցող ՀՈՒԱ համար: Մենք մշակել ենք հեռախոսային հավելված ՀՈւԱ այս խմբի համար, որը հաստատվել է նախարարության կողմից, բայց ոչինչ չի արվում այդ ծրագիրը գործարկելու ուղղությամբ»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

Հարցվածներից մեկը շեշտեց ՀՈւԱ համար հասանելի թե՛ զծերի կարևորությունը: «Էխո» ՀՈՒԱԿ-ի կողմից ղեկավարվող թե՛ զծը բազմաթիվ զանգեր է ստանում հետևյալ հարցերի վերաբերյալ. կենսաթոշակների ձևակերպում, սոցիալական ծրագրերին դիմելու, հաշմանդամության կարգավիճակ և սերտիֆիկատ ստանալու վերաբերյալ: Բացի այդ ՀՈւԱ բախվել են որոշ դժվարությունների, քանի որ ԲՍՓ ընթացակարգերը փոխվել են համավարակի ընթացքում, և բյուրոկրատական ընթացակարգերը դարձել են ավելի ծանրաբեռնված: ՀՈՒԱ իրավունքների պաշտպանության մասին նոր օրենքի համաձայն, որն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ֆունկցիոնալության գնահատումը կկիրառվի հաշմանդամության խմբի փոխարեն<sup>3</sup>:

*«Մեր շահառուներից երկուսը հաշմանդամության ճանաչման գործընթացում խնդիրներ ունեցան, քանի որ կանոնակարգը փոխվել էր: Եվ նրանք մնացին հին ու նոր կանոնակարգերի միջև»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

Հարցվածների կողմից համավարակի ընթացքում համացանցի հասանելիության ոչ մի խնդիր կամ սահմանափակում չի նշվել: 9-ից հարցվածներից 5-ը նշել են, որ կարող են ազատորեն օգտվել ինտերնետից և՛ տեղեկատվություն ստանալու, և՛ հաղորդելու համար: 4 հարցվողներ բախվել են ողջամիտ դժվարությունների հետ:

Ոչ բոլոր ՀՈւԱ ունեն համացանցի հասանելիություն, տեղեկացված չեն սոցիալական մեդիայի, թվային և համացանցային գործիքների մասին ու պատրաստ չեն դրանք օգտագործել: Հիմնականում տարեց մարդիկ են տուժել այդ խնդրից և չեն կարողացել

<sup>3</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքը, ընդունված 2021 թ. մայիսի 5-ին (URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152960>):



արդյունավետ օգտագործել թվային գործիքները համավարակի ընթացքում: Ավելի երիտասարդները շատ արագ ծանոթացան նոր գործիքներին:

*«Ոչ բոլոր ՀՈւԱ-ներն ունեն համացանցի հասանելիություն, նրանք չեն կարող օգտվել համացանցից: Նրանք ընդամենը 26,500 դրամ նպաստ են ստանում, ինչը բավարար չէ անգամ նրանց առաջնային կարիքները հոգալու համար: Մեր շահառուներից ոմանք խնդրում են մեզ գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը համացանցում, քանի որ նրանք չեն կարող: Ինտերնետ հասանելիությունն ու սմարթֆոններն այսօր պարտադիր պայմաններ են: Առանց այդ գործիքների դուք իսկապես զրկված եք շատ բաներից»:* («Մպիտակ բազե» ՀԿ)

Երբ ՔՀԿ աշխատում են պետական հիմնարկների հետ, նրանք սովորաբար հարցերը գրավոր են ուղղում և ստանում են պաշտոնական պատասխանները նշված ժամկետում: Հարցվածների մեծ մասն ընդգծեց իրենց դժգոհությունը պաշտոնական նամակների պատասխանը ստանալու համար անհրաժեշտ ժամանակից, մյուսները՝ նաև բուն պատասխանի բովանդակությունից, դրա անհամապատասխան կամ մասնակի լինելուց:

*«Սովորաբար մենք պաշտոնական նամակների պատասխանները ստանում ենք շատ ուշ»:* («Ունիսոն» ՀՈՒԱԿ)

*«Մենք դիմեցինք կառավարությանը՝ ՀՈւԱ համար Երեխաների քաղաքը կառուցելու վերաբերյալ, բայց մենք պատասխան չստացանք»:* («Սկարպ» ՀՈՒԱԿ)

*«Մենք կարող ենք գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը առցանց: Մենք տեղեկատվություն ենք ստացել սոցիալական հարցերի, երեխաների հետ կապված խնդիրների, ՀՈւԱ և այլնի մասին: Եղել են դեպքեր, երբ դիմել ենք պետական պաշտոնյաներին առցանց և ստացել ենք պատասխանը ինչպես առցանց, այնպես էլ թղթային տարբերակով: Մարդու իրավունքներին վերաբերող հարցերով մենք դիմել ենք թե՛ զժի միջոցով և ստացել բավարար պատասխան»:* («Մպիտակ բազե» ՀՈՒԱԿ)

*«Ընթերցանության և գրելու սահմանափակումներ ունեցող մարդկանց համար մեր հավելվածը հաստատվել է նախարարության կողմից, սակայն դեռ ընթացք չի ստանում: Մենք մոտեցանք փոխնախարարին, նա խոստացավ, որ կքննարկի, բայց դեռ ոչ մի արձագանք չունենք: Կարծում եմ, որ կառավարությունը պետք է ավելի հետևողական ու նվիրված լինի իրենց կողմից հաստատված ծրագրերին»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

*«Մենք դիմում ենք պետությանը՝ ՀՈՒԱ կողմից ցերեկային խնամքի ծառայություններից օգտվելու դժվարությունների վերաբերյալ: Մենք նամակներ ենք գրում նախարարությանը: Օրինակ, ես ուղեղային կաթված ունեցող երեխայի դիմումը գրել եմ, բայց արդեն ուշ էր, նրա տան կողքի դպրոցն արդեն լիքն էր, նրան չընդունեցին: Արդյունքում նրան ուղարկեցին այլ դպրոց, որը տնից մի փոքր հեռու է, և ծնողի համար դժվար կլինի նրան այնտեղ տանել»:*

*Այսպիսով, մենք ևս մեկ անգամ դիմեցինք նախարարություն: Գործը ընթացքի մեջ է »: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Երևանի քաղաքապետարանը չի կարող պատասխանել մեր հարցերին: Երևանի քաղաքապետարանի մոնիտորինգի վարչությունը շատ վատ է աշխատում: Ես անցյալ տարի դիմել էի Երևանի քաղաքապետարան՝ Երևանում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցուցակների համար: Մենք ցանկանում էինք ուղարկել մեր կամավորներին ստուգելու ցուցակները, սակայն նրանք պատասխանեցին, որ չեն կարող տրամադրել այդ տեղեկատվությունը»:*  
*(«Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Երբեմն տեղական կազմակերպությունները տեղյակ չեն այդ տեղեկատվությունից: Համապատասխան տեղեկատվություն ստանալու համար ուղղակիորեն պետք է կապվենք նախարարության հետ: Նախքան անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալը, դուք պետք է մի քանի քայլ կատարեք»:*  
*(«Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

*«Լավ կլիներ, որ իրական տեղեկատվությունը տեղադրվեր պաշտոնական կայքում, նորությունների բաժնում, այլ ոչ թե, օրինակ, նախարարի անձնական Ֆեյսբուքյան էջում: Նրանք պետք է Facebook-ից վերադառնան իրական կյանք»:*  
*(«Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

Հարցման մասնակիցներից ոմանք շեշտում էին, որ պետական կառույցների հետ շփումն ավելի դյուրին է դարձել 2018 թ-ից հետո:

### **Խոսքի ազատությունը համավարակի ընթացքում**

9 հարցվածներից 5-ը պատասխանել են, որ կարող են ազատորեն արտահայտել իրենց դիրքորոշումն ու կարծիքը հանրության առջև՝ առանց կաշկանդվելու պետական մարմինների ճնշումներից: 4 հարցվածներ նշել են, որ ունեցել են ողջամիտ դժվարություններ այս առումով: Հարցման ենթարկված ՔՀԿ ներկայացուցիչները չեն հայտնել պետական գերատեսչությունների կողմից ճնշումների որևէ դեպքի մասին: Նրանք կարող են ազատորեն հրապարակել իրենց դիրքորոշումը: Դիրքորոշումը հրապարակայնորեն արտահայտելու համար հիմնականում օգտագործվում է սոցիալական մեդիան:

*«Համավարակի ընթացքում եղան որոշ կոնֆլիկտներ, ես քննադատեցի որոշ պետական մարմինների, քանի որ կարիքների պատշաճ գնահատում չէր կատարվել, բայց իրենց կողմից ճնշում չի եղել: Ես գրել եմ, որ 3 տարի շարունակ ոչ մի հետազոտություն չի կատարվել վարչապետի հայտարարությունից հետո, որ մենք չգիտենք, թե ով է հարուստ և ով է աղքատ: Այսպիսով, ես մեղադրեցի կառավարությանը ոչինչ չանելու համար: Նրանք արձագանքեցին, և ես պնդեցի իմ կարծիքը, քանի որ երկու տարի շարունակ ԱՍՀՆ որևէ կարիքի գնահատում չէր իրականացրել»:*  
*(«Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Ես փորձում եմ չքաղաքականացնել կազմակերպությունը: Օրինակ, եթե ես Սերժ Սարգսյանի կառավարության օրոք քաղաքապետին քննադատող հոդված գրեի, ոստիկանությունը կարող էր այցելել ինձ: Հիմա դա արդեն այդպես չէ: Այն ժամանակ էլ էի ես ազատ, հիմա էլ եմ ազատ, պարզապես այն ժամանակ դա ավելի տհաճ էր դիտվում»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Հիմա ավելի լավ է, քան երբևէ: Այն ժամանակ վախի մթնոլորտ էր տիրում, որ ինչ-որ մեկը կարող է հեռացվի աշխատանքից կամ կտրվի նպաստից, այսօր դա այլևս այդպես չէ: Մենք ճնշման կամ պարտադրանքի ոչ մի դեպքի չենք հանդիպել: Մենք ազատ ենք արտահայտել մեր կարծիքը, նույնիսկ եթե այն չի համապատասխանում պետության դիրքորոշմանը»: («Սպիտակ բազե» ՀՈՒԱԿ)*

*«Պատերազմի ժամանակ մենք ստացանք հայտարարություն՝ չտրամադրել աջակցություն մինչև հաշմանդամության կարգավիճակի պաշտոնական տրամադրումը, ինչը հակասում էր պետական պաշտոնյաների հայտարարություններին: Ես այդ մասին գրել եմ ֆեյսբուքյան ստատուս՝ չնշելով մարդկանց: Հաջորդ օրը արձագանքեց նախարարի առաջին տեղակալը և առաջարկեց լուծել խնդիրը: Այն իսկապես լուծվեց ժամերի ընթացքում: Մինչ այդ ոչինչ չէր լուծվում շաբաթներով: Իհարկե, նրանք ինձ գրեցին անձնական նամակներ՝ խնդրելով, որ անհրաժեշտության դեպքում դիմեմ նրանց: Այսպիսով, ես այդպես արեցի հաջորդ անգամ, փոխնախարարն ասաց, որ կանի, բայց ոչինչ չարեց: Հետո զանգահարեցի նրա ձեռքի համարին, նա նորից խոստացավ, բայց նույնպես ոչինչ չարեց»: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

*«Մենք պետությունից որևէ ֆինանսական աջակցություն չենք ստանում 2019 թվականից, այնպես որ մենք ճնշման եթարկվելու խնդիր չունենք, մենք լիովին ազատ ենք հրապարակավ արտահայտել մեր կարծիքը: Մենք պետությունից ֆինանսական կախվածություն չունենք. դա մի կողմից լավ է, սակայն մյուս կողմից, վատ է, որ աջակցություն չենք ստանում: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

Միաժամանակ, ՔՀԿ ներկայացուցիչները նշում են, որ ՀՈՒԱ ազատ խոսքի իրավունքի իրացման մասինխոսք լինել չի կարող քանի դեռ հանրային տարածքների մատչելիությունն ապահովված չէ: Երևանի հանրային տարածքները մատչելի չեն, սակայն վիճակն ավելի վատ է մարզերում:

*«Պատերազմից հետո շատ է քննարկվել ՀՈՒԱ համար քաղաքի մատչելիության խնդիրը, բայց ոչինչ չի արվել: Եղբորս տղան վիրավորվել է Շուշիում, նույնիսկ չեն կարողացել վիրահատել Հայաստանում, ուղարկել են Գերմանիա: Այն ամենը, ինչ հնարավոր է նախապես անել, չպետք է հետաձգվի»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«ՀՈՒԱ-ն կախված է այլ անձանցից, քանի որ հանրային տարածքները և շենքերը մատչելի չեն: Նրանք հաճախ ընտրում են դուրս չգալը կամ գործողությունների չդիմելը»: («Սպիտակ բազե» ՀՈՒԱԿ)*

9 հարցվածներից 3-ը հայտնել են, որ ՔՀԿ-ները լիովին պաշտպանված են քաղաքական ոսնձգություններից՝ անգամ պետական քաղաքականությանը հակադրվելու կամ բողոքելու դեպքում: 2 հարցվածների կարծիքով՝ ՔՀԿ-ները հիմնականում

պաշտպանված են, իսկ 4 հարցվածներ չկարողացան պատասխանել այս հարցին, բայց և չնշեցին կառավարության կողմից ճնշման որևէ դեպքի մասին:

### Համավարակի ընթացքում միավորումների ազատությունը

9 հարցվածներից 7-ը համավարակի ընթացքում իրենց միավորումների ազատությունը կիրառելու հետ կապված սահմանափակումների չեն բախվել: Պետական մարմինների կողմից իրենց հավաքների և ցույցերի պատճառով հետապնդման մտավախություն չեն ունեցել: Միայն 2 հարցվածներ են հանդիպել ողջամիտ դժվարությունների ցույցերի կազմակերպման և մասնակցության հարցում: Ամեն դեպքում, բոլոր հարցվածները հայտարարել են, որ չունեն որևէ քաղաքական օրակարգ, ուստի նրանց հավաքներն ու ցույցերը չեն կարող ունենալ որևէ քաղաքական ենթատեքստ:

*«Հունիսի 12-ին մենք մասնակցեցինք Աուտիզմի օրվան նվիրված միջոցառմանը, որը կազմակերպել էր Հուլիսի կամուրջը: Ներկայացվեց տեղեկատվություն աուտիզմի մասին: Ոչ մի սահմանափակում չկար»: («Հավասար հնարավորություններ և ներառում» ՀԿ)*

*«Մենք երբեք խնդիրների չենք հանդիպել: Մենք քաղաքական օրակարգ չունենք»: («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

*«Մենք հավաքը կազմակերպեցինք որպես իրազեկման միջոց: Խնդիրներ չեղան»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Եղել են 2 նախաձեռնություններ: Պատերազմի ժամանակ նախաձեռնությունը մեկն էր. գնալ զինկոմիսարիատներ՝ մյուսներին մոտիվացնելու համար: Գաղափարն այն էր, որ նույնիսկ հաշմանդամ մարդիկ են միանում կամավորներին: Բայց ինձ դուր չեկավ այդ նախաձեռնությունը և մենք չմիացանք դրան: Պատերազմից հետո մեկ այլ նախաձեռնություն եղավ. բողոքի ակցիա անցկացնել Ռուսաստանի դեսպանատան դիմաց՝ հայ գերիներին վերադարձնելու պահանջով: Ես նույնպես մերժեցի մեր մասնակցությունը: Ես լիովին ազատ էի որոշելու հարցում: Ոչ մի ճնշում չկար: Մենք քաղաքական օրակարգ չունենք և մեր բոլոր աշխատակիցներն ունեն տարբեր քաղաքական հայացքներ»: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

9 հարցվածներից 7-ը պատասխանել են, որ իրենց հասարակական կազմակերպությունները կարողացել են գործել անկախ և խուսափել պետության միջամտությունից: Հարցվողներից մեկը հայտնել է ողջամիտ դժվարությունների մասին, մյուսը չի կարողացել պատասխանել հարցին:

*«Մեզ մի քանի անգամ դիմեցին քաղաքական գործընթացներին ներգրավվելու համար, բայց մենք հետևողականորեն մերժեցինք այդ առաջարկները: Դա մեզ նրանցից կախվածության մեջ կզցեր»: («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)*

## Համավարակի ընթացքում քաղաքացիական մասնակցության խնդիրները

Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին լիովին ապահովված չի եղել, ՀԿ-ները սահմանափակ ազդեցություն են ունեցել արտակարգ իրավիճակների վերաբերյալ որոշումների կայացման վրա և ՀՈԱ իրավունքները լիովին չեն պաշտպանվել:

Հետազոտության ընթացքում թիրախավորված 9 ՔՀԿ-ներից 4-ը կարող էին ազատ և հեշտությամբ պաշտպանել իրենց շահառուների իրավունքներն ու շահերը՝ չվախենալով կառավարության միջամտությունից: 4 ՔՀԿ բախվել են ողջամիտ դժվարությունների, իսկ հարցվածներից մեկը չկարողացավ պատասխանել հարցին:

ՔՀԿ ներկայացուցիչների փորձը՝ արտակարգ քննարկումներին, որոշումների կայացման գործընթացներին մասնակցության առումով (օրինակ՝ հանրային խորհրդակցություններ, հանձնաժողովի աշխատանքներ, միջոցառումների մասնակցային պլանավորում և այլն) հիմնականում բացասական է: 9 հարցվածներից 4-ը հայտնել են, որ երբեք չեն մասնակցել արտակարգ քննարկումներին: Հարցվածներից մեկը հայտնել է որոշ, իսկ մյուսը՝ զգալի դժվարությունների մասին: Միայն մեկ ՔՀԿ-ն է ամբողջությամբ մասնակցել արտակարգ իրավիճակների քննարկումներին, մյուսը բախվել է ողջամիտ դժվարությունների: Հարցվողներից մեկը չկարողացավ պատասխանել հարցին:

9 ՔՀԿ-ից 4-ը չեն ազդել որոշումների կայացման գործընթացների վրա, մեկ ՔՀԿ էական դժվարություններով է ազդել որոշումների կայացման վրա, մյուսը՝ որոշ դժվարություններով, 2 ՔՀԿ՝ ողջամիտ դժվարություններով: Հարցվողներից մեկը չկարողացավ պատասխանել հարցին:

*«Համավարակի ընթացքում նույնիսկ սոցիալական աջակցության ծրագրերը իրականացնում էր ոչ թե ԱՍՀՆ, այլ կառավարությունը: Ոչ մի ՀԿ չի մասնակցել որոշումների կայացման կամ ծառայությունների նախագծման աշխատանքներին: Ես Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի Հանրային խորհրդի անդամ եմ, ես նաև քաղաքապետարանի հասարակական խորհրդի անդամ եմ: Բայց միայն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն է նորմալ աշխատել, նրանք շատ արագ են պատասխանել մեր նամակներին »: («Էխո» ՀՈԻԱԿ)*

*«Ես ՀՈԱ հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովի անդամ եմ, բայց հանձնաժողովն այդ առնչությամբ երբեք չի հանդիպել (արտակարգ իրավիճակներում), նույնիսկ էլեկտրոնային հարցումներ չեն եղել »: («Սկարպ» ՀՈԻԱԿ)*

«Ունիստ» ՀՈԻԱԿ-ը դուրս մնաց ԱՀ-ից 2018 թվականին՝ տասնամյակներ շարունակ դրա անդամ լինելուց հետո: Նրանք ոչ մի պետական մարմնի կողմից չեն հրավիրվել և չեն տեղեկացվել գործող հանձնաժողովի կազմի փոփոխության մասին: Սա գոնե

ԱՍՀՆ հետ անմիջական շփման միջոց էր ՔՀԿ համար, որտեղ կարևոր հարցեր կարող էին բարձրացվել և քննարկվել:

*«Մեզ պես ակտիվ ՀԿ -ները 2018 թվականից դուրս են մնացել ԱՀ-ից: Դրանից հետո ես կապս կորցրել եմ՝ անկախ COVID-ից: Այս ընթացքում կառավարությունն ինձ երկու անգամ հրավիրեց որոշ քննարկումների, բայց ես սովոր էի քննարկումների մասնակցել ամսական 1-2 անգամ: Միայն մտերիմների հետ քննարկումները, այլ ոչ թե հրապարակայնության, նոր պրակտիկա է »: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

«Հուլիսի Մեծամոր» ՀԿ-ն այլ փորձ ունի: Նրանք մեկ անգամ մասնակցել են հանձնաժողովի աշխատանքներին, սակայն որոշումների կայացման վրա ազդեցությունը դեռ պարզ չէ:

*«ԱՀ-ն նոր էր ստեղծվել: Ես առաջին անգամ մասնակցեցի ուրբաթ օրը հանձնաժողովի քննարկմանը: Չգիտեմ, թե ինչպես կշարունակվի: Բայց ՀԿ մասնակցությունը կարևոր է: Միշտ չէ, որ ազդեցություն է եղել որոշումների կայացման վրա, բայց մենք մասնակցում էինք »: («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

### **Համավարակի ընթացքում խտրականության բացակայության և ներառում**

Հայաստանում ՀՈՒԱԿ-ները, բացի հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների իրավունքները պաշտպանելուց, նաև ծառայություններ են մատուցում՝ աջակցելով թիրախային խմբերի սոցիալական ներառմանը: Բացառող բազմաթիվ գործոններ (օրինակ՝ սեռը, տարիքը, աղքատությունը) հանգեցրին բազմաթիվ խտրականությունների և զգալիորեն սահմանափակեցին ծառայությունների հասանելիությունը:

ՔՀԿ ներկայացուցիչները հայտնում են, որ հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքացիական մասնակցության հնարավորություններն ավելի քիչ են՝ նրանց իրավունքների պաշտպանության, որոշումների կայացման վրա հավասար դերակատարության և ազդեցության առումով: 9 հարցվածներից 4-ը պատասխանել են, որ հաշմանդամություն ունեցող կանայք ավելի քիչ քաղաքացիական մասնակցություն ունեն, քան տղամարդիկ, 3-ը նշել են, որ հաշմանդամ կանանց քաղաքացիական մասնակցությունը սահմանափակ է, հարցվածներից մեկը պատասխանել է, որ կանանց քաղաքացիական մասնակցությունը շատ սահմանափակ է, մեկ հարցվող չի կարողացել պատասխանել հարցին:

ՀՈւԱ գենդերային անհավասարության պատճառները հայ հասարակության մեջ առկա գենդերային կարծրատիպերն են:

*«Մենք ունենք դեռահաս շահառուներ: Հաշմանդամություն ունեցող կանայք ավելի պասիվ են, քան տղամարդիկ: Իգական սեռի ՀՈՒԵ ունեցող ընտանիքներն ավելի խոցելի են, քան արական սեռի ՀՈՒԵ ունեցողները: Դա*



*պայմանավորված է գենդերային կարծրատիպերով: Բայց կան նաև կին շահառուներ, որոնք շատ ակտիվ են»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Մտավոր խնդիրներ ունեցող տղաներին այլ կերպ են վերաբերվում, իսկ նույն մտավոր խնդիրներ ունեցող աղջիկներին վերաբերմունքը կարծրատիպային է: Այն երիտասարդ կինը, որն ունի ավելի լավ ակադեմիական հնարավորություններ, քան նման խնդիր ունեցող տղամարդը, ճանաչվել է անգործունակ»: («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)*

*«Հաշմանդամություն ունեցող կանանց վիճակը նման է այն կանանց, ովքեր չունեն հաշմանդամություն: Նրանցից ոմանք կարողանում են հաղթահարել խտրականությունը և հաջողության են հասնում»: («Հույսի Մեծամոր» ՀԿ)*

*«Հաշմանդամություն ունեցող տղամարդկանց համար ավելի հեշտ է: Հարևանի որդին կամ երեխան օգնում են նրանց: Կինը չի ցանկանում որևէ դժվարություն պատճառել այլ մարդկանց, հարազատներին կամ երեխաներին: Նա նախընտրում է մեկուսանալ իր տանը»: («Մպիտակ բազե» ՀՈՒԱԿ)*

*«Հաշմանդամություն ունեցող ակտիվ կանանց համար սահմանափակումներ չկան: Եթե ՀԿ դեկավարը հաշմանդամություն ունեցող կին է, ապա ոչ մի խնդիր չկա: Բայց համայնքներում ապրող հաշմանդամություն ունեցող կանայք լռում են, նրանց ձայնը լսելի չէ»: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

Միևնույն ժամանակ, ֆինանսավորում ստանալու շանսերը բարձրանում են, եթե ՔՀԿ դեկավարը կին է: Այս դեպքում իրավունքները հավասար են, և ֆինանսավորման հասանելիությունն ապահովված է: Մնացած դեպքերում հաշմանդամություն ունեցող կանանց համար շատ սահմանափակումներ կան բոլոր ոլորտներում:

Աղքատ և տնտեսապես անապահով ՀՈւԱ քաղաքացիական ներգրավման հնարավորությունները նրանց իրավունքների պաշտպանության, հավասար դերի և ազդեցության առումով նույնպես սահմանափակ են: 9 հարցվածներից 4-ը նշում են, որ աղքատ և տնտեսապես անապահով հաշմանդամների քաղաքացիական մասնակցությունը սահմանափակ է, մյուս 4-ը կարծում են, որ շատ սահմանափակ է, և 1 հարցված պատասխանել է, որ ՀՈւԱ ընդհանրապես քաղաքացիական մասնակցություն չունեն:

*«Հաշմանդամություն ունեցող աղքատ մարդիկ կամ տեղյակ չեն իրենց իրավունքներից, կամ էլ չափազանցված ակնկալիքներ ունեն: Օրինակ՝ նրանք կարծում են, որ պետությունը պարտավոր է նրանց ուղարկել Գերմանիա բուժման կամ կարծում են, որ պետությունը նրանց հետ կապ չունի»: («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

*«Աղքատ մարդիկ և ցածր եկամուտ ունեցող ՀՈՒԱ չեն հավատում, որ օրենքը գրված է իրենց համար: Նրանք իրենց տեսնում են որպես զոհ, ընտանեկան նպաստները դիտվում են որպես բարեգործություն պետությունից, այլ ոչ օրենքի կիրարկում: Այդ պատճառով նրանք շատ պասիվ են: Հաշմանդամությունը*

*նպաստում է աղքատության խորացմանը, քանի որ նրանց խնդիրները տարբեր են »: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Իրավիճակն ավելի վատ է աղքատ ՀՈւԱ դեպքում: Աղքատ մարդիկ հարմարվում են իրենց կարգավիճակին, նրանք չեն փնտրում ավելի լավ հնարավորություններ, նրանց հետ աշխատելիս շատ դժվար է հասնել որևէ փոփոխության: Այս մարդիկ կորցնում են իրենց հավատը: Եվ նրանք սպասում են աջակցության: Աղքատությունը վերարտադրվում է, քանի որ մարդիկ լիարժեք ծառայություններ չեն ստանում »: («Հույսի Մեծամոր» ՀԿ)*

9 հարցվածներից 4 -ը հայտնել են, որ կառավարությունը ձեռնարկել է տարեց ՀՈւԱ կյանքը, առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ: 2 հարցվածներ պատասխանել են, որ կառավարության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել: Իսկ 3 հարցվածներ տեղյակ չեն կառավարության ձեռնարկած որևէ միջոցառման մասին: Օրինակ, նշվել է, որ սուպերմարկետներում տարեցները պետք է գնումներ կատարեն մինչև ժամը 12:00, իսկ մնացած բոլոր մարդիկ՝ օրվա ընթացքում ավելի ուշ: Այսպիսով փորձում էին պաշտպանել տարեց հաճախորդներին:

### **ՀՈՒԵ պաշտպանությունը համավարակի ընթացքում**

9 հարցվածներից 4 -ը հայտնել են, որ կառավարությունը միջոցներ չի ձեռնարկել ոչ հաստատություններում, ոչ համայնքներում ապրող ՀՈւԵ կյանքի, առողջության և անվտանգության պաշտպանության համար: 3 հարցվողներ պատասխանել են, որ որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ են ձեռնարկվել: Իսկ 2 հարցվածներ տեղյակ չեն կառավարության ձեռնարկած որևէ միջոցառման մասին:

*«Կառավարության կողմից ոչինչ չի արվել ՀՈՒԵ համար: Ծնողները չէին կարող օգտագործել Zoom հարթակը, դա նրանց համար շատ դժվար էր: Կրթությունը չպետք է անցներ առցանց հարթակներ: Պետությունը, ՀՈՒԵ և նրանց ծնողները պատրաստ չէին դրան »: («Էխո» ՀՈՒԱԿ)*

9 հարցվածներից 5-ը նշել են, որ կառավարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկել ՀՈւԵ ընտանիքներին աջակցելու համար: 3 հարցվողներ պատասխանել են, որ որոշակի, բայց ոչ բավարար միջոցներ են ձեռնարկվել, իսկ հարցվողներից մեկը տեղյակ չէ կառավարության ձեռնարկած որևէ միջոցառման մասին:

*«ՀՈւԵ ընտանիքներն իրենք էին միջոցներ գտնում: Խոցելի ու աղքատ ընտանիքներն աջակցություն են ստացել պետությունից: Ակտիվ էին նաև հաստատությունները»: («Հույսի Մեծամոր» ՀԿ)*

Հաշմանդամություն ունեցող աշակերտները համավարակի ընթացքում ավելի շատ խոչընդոտների են հանդիպում՝ անհրաժեշտ սարքավորումների, մատչելի նյութերի և օժանդակության բացակայության պատճառով, որոնք անհրաժեշտ են առցանց դպրոցական ծրագրերին հետևելու համար: 9 հարցվածներից 4-ը հայտնել են, որ



կառավարությունը որևէ միջոց չի ձեռնարկել՝ ապահովելու ՀՈՒԵ դպրոցներ (հատուկ կամ ընդհանուր) հաճախելու իրավունքը: 4 հարցվածներ կարծում են, որ կառավարության ներկայացրած միջոցառումները բավարար չէին: Իսկ հարցվածներից մեկը տեղյակ չէր:

*«ՀՈՒԵ գրկված էին դասերին մասնակցելու հնարավորությունից, դպրոցները անցան առցանց, բայց երեխաները չկարողացան միանալ դասադասարանին, ուսուցիչները չունեին Zoom-ից օգտվելու բավարար հմտություններ և չկարողացան ներառել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Հետևաբար, երեխաների 88-89%-ը դուրս է մնացել կրթական ծառայություններից: Ավելին, երբ դպրոցներում դասերն անցանց էին, գիտելիքների բացը չէր լրացվում, ՀՈՒԵ լրացուցիչ ծառայություններ չէին ստանում»:* («Մենք կարող ենք» ՀՈՒԱԿ)

*«ՀՈՒԱ թույլատրվեց միանալ դասերին առցանց, այլ ոչ թե դպրոց գալ: Բոլորի համար կային դիմակներ և ախտահանիչ միջոցներ»:* («Հույսի Մեծամոր» ՀԿ)

ՔՀԿ ներկայացուցիչների մեծ մասը մտահոգված է հաստատություններում ապրող ՀՈՒԵ կրթությամբ: Նրանց կարծիքով կարանտինի ընթացքում ՀՈՒԱ սահմանափակ հասանելիություն են ունեցել կրթությանը:

*«Կան հաստատություններ, որոնք ունեն 2 համկարգիչ 130 երեխայի համար»:* («Էխո» ՀՈՒԱԿ)

*«Գիշերօթիկ դպրոցներից մեկը որոշեց փակվել, մյուսը որոշեց շարունակել աշխատանքը: Պետության կողմից այդ կապակցությամբ միասնական որոշում չի եղել: Այսինքն՝ պետությունը չի կարողանում խոցելի խմբերի վերաբերյալ որոշումներ կայացնել»:* («Հույսի Մեծամոր» ՀԿ)

## **Մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը համավարակի ընթացքում**

Առավել մարզինալացված մարդիկ հաճախ են բախվում բազմաթիվ զրկանքների, առերեսվում անարդարությանը, որի արդյունքում խոչընդոտներ են ստեղծվում նրանց իրավունքների լիարժեք իրացման համար: 9 հարցվածներից 8-ը հայտնում են, որ Հայաստանում ՀՈՒԱ իրավունքները լիովին չեն հարգվում: Հարցվածներից միայն մեկն է գնահատում մեղմ այն խնդիրները, որոնց բախվում են ՀՈՒԱ:

ՔՀԿ ներկայացուցիչները չեն հավատում, որ օրենքի գերակայությունն արդյունավետորեն իրացվում է Հայաստանում: 9 հարցվածներից 5-ը կարծում են, որ օրենքի գերակայությունն իրականացվում է որոշ սահմանափակումներով, 2 հարցվածներ կարծում են, որ սահմանափակումները մեղմ են, 1-ը կարծում է, որ սահմանափակումներն էական են, մեկ ուրիշը կարծում է, որ Հայաստանում օրենքի գերակայությունն ընդհանրապես ապառվված չէ:

*«Մենք օգնել ենք 2 ՀՈՒԱ շահառուներին զբաղվածության պետական գործակալության միջոցով աշխատանք գտնելու հարցում վերջին 2-3 ամսվա*

*ընթացքում: Մենք ստիպված էինք գործատուներին բացատրել, որ խոսքը ՀՈւԱ իրավունքների մասին է, այլ ոչ թե նրանց գումարի»: («Մպիտակ բազե» ՀՈՒԱԿ)*

Հայաստանում ՀՈւԱ իրավունքների իրացման վրա բացասաբար ազդող ամենակարևոր խնդիրն այն է, որ նրանց համար ապահովված չէ մատչելի միջավայր և ազատ տեղաշարժվելու հնարավորություն: Այս իրավունքները շատ սահմանափակ են կամ ընդհանրապես չեն ապահովված: Երևան քաղաքում կան որոշ թեքահարթակներ, որոնք հիմնականում չեն համապատասխանում ստանդարտ պահանջներին և օգտագործելի չեն: Որոշ շտկումներ են կատարվում հասարակական տրանսպորտում, սակայն մատչելիությունը դեռևս լուրջ խնդիր է Հայաստանում:

ՀՈւԱ իրավունքների խախտման մյուս պատճառն այն է, որ պետական հաստատությունների կողմից պատշաճ կարիքների գնահատում չի կատարվում: Այս պատճառով կառավարությունը ի վիճակի չէ արձագանքել ՀՈւԱ կարիքներին:

Կրթության իրավունքն ամենակարևորներից է ՀՈՒԱ իրավունքների համատեքստում: Հայաստանի դպրոցների մեծ մասը ներառական են: Ընդհանուր ներառումը նախատեսվում է 2025 թվականի օգոստոսին: Այնուամենայնիվ, ներառական կրթության հետ կապված նույնպես շատ խնդիրներ կան:

*«Ներառական կրթության գաղափարը շատ լավն է: Օրենքը լավ գրված է, բայց կիրարկման հետ կապված խնդիրներ կան: Այդ իսկ պատճառով ներառական կրթությունը դեռ արդյունավետ չէ»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

*«Գրված օրենքները հաճախ չեն գործում, քանի որ բավարար ռեսուրսներ չկան»: («Հուլսի Մեծամոր» ՀԿ)*

*«Որոշ դպրոցներում գործում է կաբինետային համակարգը. աշակերտները օրվա ընթացքում մեկ դասարանից մյուսն են տեղափոխվում: Անհնար է, որ ՀՈՒԵ տեղափոխվի մեկ հարկից մյուսը: Այդ պատճառով ծնողները ցանկանում են երեխային դպրոցից հանել և նախընտրում են տնային ուսուցումը»: («Էխո» ՀՈՒԱԿ)*

ՀՈՒԵ ծնողների իրավունքները նույնպես անտեսվում են: ՀՈՒԵ համար ծառայությունների բացակայությունը հանգեցնում է մի իրավիճակի, երբ ծնողները պետք է ստանձնեն երեխայի խնամքի և կրթության ամբողջ պատասխանատվությունը, ներդնեն իրենց ժամանակը և ֆինանսական միջոցները: Որպես կանոն, նրանք կորցնում են կրթության և աշխատանքի հնարավորությունները:

*«Եթե ծնողը ցանկանում է աշխատել, բայց նա պետք է հոգ տանի ՀՈՒԵ մասին, ապա դա խնդիր է: Իսկ եթե նա չի աշխատում, ապա ֆինանսական վիճակը վատանում է, և դա ազդում է երեխայի վրա: Կարծում եմ, որ հատուկ դպրոցների փակումը սխալ էր: Տարիներ առաջ ծնողները կարող էին ընտրել՝ երեխան գնա ներառական դպրոց թե հատուկ: Օրինակ, որոշ ՀՈւԵ հաճախում են ներառական դպրոց միայն շաբաթը երկու անգամ: Ի՞նչ պետք է անի ծնողը այս դեպքում: Ծնողների իրավունքները ոտնահարված են: Չեմ կարծում, որ*

*երեխան, ով դպրոց է հաճախում շաբաթական ընդամենը երկու անգամ, իսկապես վայելում է կրթության իր իրավունքը»։ («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

*«Ես ՀՈՒԵ ունեմ, նա մեծացել է, արդեն հասունացել է, բայց գործազուրկ է։ Ես նաև ՀԿ և ՀՈւԱ իրավունքների պաշտպանության ոլորտի դերակատար եմ, բայց նրա համար աշխատանք չեմ գտնում, նա դեռ իմ խնամքի տակ է։ Կան շատ ընտանիքներ, որոնք ունեն ՀՈՒԵ և չունեն ապագայի տեսլական։ ՀՈՒԵ ծնողները նույնպես բախվում են իրենց իրավունքների իրացման խնդիրների հետ։ Մենք ասում ենք, որ հաշմանդամությունը դատավճիռ չէ, բայց հենց դատավճիռ է, որ կրթված ծնողը չի կարող աշխատել։ Ծնողների իրավունքները խախտված են։ Ինչո՞ւ են նրանք գնում արտասահման։ Որովհետև այնտեղ նրանց իրավունքներն ամբողջությամբ իրացված են»։ («Հուլիսի Մեծամոր» ՀԿ)*

ՀՈւԱ իրավունքները պաշտպանող որոշ կանոնակարգեր և օրենքներ կրում են դեկլարատիվ բնույթ։ Քաղաքական գործիչները դրանք օգտագործում են իրենց պոպուլիստական նպատակներին հասնելու և ավելի շատ ձայներ ստանալու համար։ Բայց դա գրեթե չի փոխում իրավիճակը ՀՈՒԱ համար։

*«Մենք ունեինք հաշմանդամություն ունեցող ԱՍՀՆ նախարար։ Իրականում դա նշանակություն չունեցավ և դա չփոխեց իրավիճակը։ Դա պարզապես օգտագործվում էր ցուցադրելու համար, որ մենք սայլակին նստած կին նախարար ունենք»։ («Ունիսոն» ՀՈՒԱԿ)*

ՀՈւԱ իրավունքների պաշտպանության մասին նոր օրենքն ընդունվել է 2021 թվականի մայիսին, սակայն ոչ ոք չի զգացել դրա ազդեցությունը կամ զարգացումը<sup>4</sup>։

---

<sup>4</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքը, ընդունված 2021 թ. մայիսի 5-ին (URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152960>):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

COVID-ը և հետևյալի դեպքում իրականությունը ստիպեցին գիտակցել այն մարտահրավերները, որոնց բախվում են ՀՈԱ վարակների բռնկումների պատճառով: Տարբեր հետազոտությունների արդյունքներ փաստում են, որ COVID-19 համավարակի ընթացքում ՀՈԻԱ ամենախոցելի խմբերի շարքում են:

COVID-19 իրավիճակը վտանգի տակ է դրել նաև ՔՀԿ կայունությունը: Հայաստանում ՀՈԱ հետ աշխատող բոլոր ՔՀԿ տուժել են COVID-19-ի սահմանափակումներից. նրանց գործունեությունը կրճատվել է, ՔՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունները չեղարկվել կամ փոփոխվել են: Հայաստանում գործող ՔՀԿ-ները 2020 թվականի սեպտեմբերին բախվեցին նոր մարտահրավերների՝ Արցախյան 44-օրյա պատերազմի բռնկման պատճառով: Նրանցից շատերը պետք է արագ վերակազմավորվեին՝ խոցելիության նոր կարգավիճակ ունեցող տարբեր խմբերին աջակցելու համար. էապես աճել է այն հոգեբանական օգնության և աջակցության կարիք ունեցող մարդկանց թիվը: Պատերազմը, կարանտինը և COVID-19 սահմանափակումները բացասաբար են անդրադարձել նրանց գործունեության, ծառայությունների որակի և ծավալի ու որոշումների կայացման գործընթացներին մասնակցության վրա: Հետևաբար, տուժել են ՔՀԿ աշխատակիցներն ու շահառուները:

ՔՀԿ աշխատակիցները բախվեցին բազմաթիվ խնդիրների՝ կարանտինի և սահմանափակումների պատճառով. առողջական խնդիրներ, հասարակական տրանսպորտի բացակայություն, դիմակներ կրելու հետ կապված դժվարություններ, սակայն պետությունից նրանք որևէ աջակցություն չստացան:

ՀՈԱ ավելի շատ են տուժել, քան մյուս քաղաքացիները համավարակի և պատերազմական ճգնաժամերի պատճառով, քանի որ ավելի շատ մեկուսացվել, քան նախկինում, նրանց առողջական խնդիրներն անպատասխան են մնացել, քանի որ վերականգնողական կենտրոնները փակվել էին, իսկ նախատեսված վիրահատությունները չեղարկվել: Կարանտինը և COVID-19 սահմանափակումները էապես սահմանափակել են ՀՈԻԱ համար առողջապահության, աշխատանքի կամ կրթական ծառայությունների հասանելիությունը:

Հետազոտության ընթացքում հայտնաբերվել են համավարակի հետևանքով տուժած ՀՈԱ հետևյալ առավել խոցելի խմբերը՝ սայլակ օգտագործողներ, լսողության, տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք, միայնակ ապրող ՀՈԻԱ և ՀԱԵ:

Կառավարությունը որևէ էական միջոց չի ձեռնարկել ՀՈԻԵ կյանքը, առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու և նրանց ընտանիքներին աջակցելու համար: Առցանց կրթությունը մատչելի չէր ՀՈԵ շատ խմբերի համար՝ լսողության և տեսողության խնդիրներ ունեցող, մտավոր խնդիրներ և վարքագծային խնդիրներ ունեցող երեխաների համար: Ոչ բոլոր ընտանիքներն ունեին անհրաժեշտ սարքավորումներ և ինտերնետ հասանելիություն:

Տարեց մարդկանց կյանքը, առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու միայն մեկ միջոց է ձեռնարկվել. սուպերմարկետները բաց էին միայն նրանց համար մինչև

կեսօր, մնացած տարիքային խմբերի ներկայացուցիչների մուտքը սուպերմարկետներ այդ ժամանակահատվածում արգելվում էր:

Համավարակի ընթացքում կառավարության կողմից ներդրված միջոցառումներից ոչ մեկն ուղղված չի եղել ՀՈւԱ: Համավարակի ընթացքում նրանք չստացան լրացուցիչ պետական ֆինանսական աջակցությունից, քանի որ ստանում են պետական կենսաթոշակ:

Եղել են դեպքեր, երբ ՀՈւԱ, նրանց օգնականներն ու խնամողները տուգանվել են արտակարգ դրության կանոնները խախտելու, դիմակ չկրելու համար:

Հետազոտության ընթացքում չեն գրանցվել դեպքեր, երբ ՀՈւԱ մերժել են բժշկական օգնություն տրամադրելու հարցում հաշմանդամության հիմքով: Բայց բուժման մոտեցումը նույնն էր բոլոր հիվանդների համար, ներառյալ ՀՈւԱ, այնինչ ՀՈւԱ հատուկ բուժման և խնամքի կարիք ունեն, որը բժշկական հաստատությունները չեն տրամադրել: ՀՈւԱ համար պոլիկլինիկաների և հիվանդանոցների մատչելիությունը նույնպես ապահովված չէր:

Տեղեկատվության պակասը անդրադարձավ ՀՈւԱ բոլոր խմբերի և ՔՀԿ վրա: Տեղեկատվությունը շատ անկանոն էր և հակասական: ՀՈւԱ չեն ստացել բավարար տեղեկատվություն՝ ինչպես պաշտպանվել COVID-19 վարակից և ինչ անել վարակվելու դեպքում: Տեղեկատվությունը չի տրամադրվել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջոցներով: ՀՈւԱ համար տեղեկատվության մատչելիության ապահովման մի քանի միջոցներ են կիրառվել ՁԼՄ կողմից՝ ժեստերի լեզու, դանդաղ սահող տողեր հեռուստատեսությամբ, որոշ չափով պարզեցված տեղեկատվություն, տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար նախատեսված բուկլետներ, որոնք տրամադրվել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից:

ՔՀԿ ներկայացուցիչները կարող են ազատորեն կիսել իրենց դիրքորոշումն ու կարծիքը հանրության առջև հիմնականում սոցիալական մեդիայում՝ առանց կաշկանդվելու որևէ պետական գերատեսչության կողմից: Բայց ՀՈւԱ խոսքի ազատությունը հնարավոր չէ քանի դեռ հանրային տարածքների մատչելիությունն ապահովված չէ:

ՔՀԿ միավորումներ և հավքներ կազմակերպելու առումով սահմանափակումների չեն հանդիպել համավարակի ընթացքում: Նրանք կարողացել են գործել անկախ և խուսափել պետության միջամտությունից:

Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին ամբողջությամբ ապահովված չի եղել, ՀԿ-ները սահմանափակ ազդեցություն են ունեցել արտակարգ իրավիճակների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացների վրա և ՀՈւԱ իրավունքները լիարժեք չեն իրացվել:

Հաշմանդամություն ունեցող կանանց համար քաղաքացիական մասնակցության հնարավորություններն ավելի սահմանափակ են իրենց իրավունքների պաշտպանության, որոշումների կայացման վրա հավասար ազդեցության առումով, քան տղամարդկանց դեպքում: Պատճառը հայ հասարակության մեջ գենդերային

կարծրատիպերն են: Աղքատ և տնտեսապես անապահով ՀՈւԱ համար քաղաքացիական ներգրավվածության հնարավորությունները նույնպես սահմանափակ են:

Հայաստանում ՀՈԻԱ իրավունքները լիարժեք հարգված չեն: ՀՈւԱ համար մատչելի միջավայրը և ազատ տեղաշարժվելու հնարավորություններն ապահովված չեն: Պետական կառույցների կողմից կարիքների գնահատում պատշաճ ձևով չի արվում: Արդյունքում՝ կառավարությունը ի վիճակի չէ արձագանքելու ՀՈւԱ կարիքներին:

Հաշմանդամություն ունեցող անձանց ծնողների իրավունքները նույնպես անտեսվում են: ՀՈԻԵ ուղղված ծառայությունների բացակայությունը հանգեցնում է մի իրավիճակի, երբ ծնողները պետք է ստանձնեն երեխայի խնամքի և կրթության ողջ պատասխանատվությունը, ներդնեն իրենց ժամանակը և գումարը: Որպես կանոն, նրանք կորցնում են կրթության և աշխատանքի հնարավորությունները:

Հասարակական կազմակերպությունները, որոնք փորձառու են ՀՈւԱ պատվիրակված ծառայություններ մատուցելու և պետությունից ֆինանսավորում ստանալու հարցում, բախվեցին պետական ֆինանսավորման կանոնակարգի փոփոխությունների հետ, և ծառայություններ մատուցող ՀԿ տենդերները չշահեցին ու ֆինանսավորում չստացան: Մրցութային ընթացակարգերին մասնակցելու պահանջները շատ խիստ են փոքր ՀԿ-ների, հատկապես մարզերում գործող տեղական ՀԿ-ների համար: Նրանք չեն կարողնում բավարարել պահանջները:

Գրեթե բոլոր ՔՀԿ-ները աջակցեցին ՀՈւԱ համավարակի ընթացքում՝ օգտագործելով մասնավոր նվիրատվությունները և բարեգործական ֆինանսավորման միջոցները: Նրանք սնունդ, հիգիենայի պարագաներ և այլ անհրաժեշտ ապրանքներ էին տրամադրում հաշմանդամություն ունեցող անձանց: Ոմանք նաև համակարգիչներ և պլանշետներ են տրամադրել երեխաների համար, որպեսզի նրանք դուրս չմնան առցանց դասապրոցեսից:

ՀՈւԱ և նրանց ընտանիքների բացառումը կորոնավիրուսիյին վարակի կանխարգելման, բուժման և վերականգնման ամբողջական ցիկլից բասական հետևանքներ կունենա համավարակի դեմ համընդհանուր պայքարի և դրա սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման վրա:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները թույլ տվեցին մշակել մի շարք առաջարկություններ, որոնք կնպաստեն Հայաստանում ՀՈւԱ խնդիրներով զբաղվող ՔՀԿ աշխատանքի բարելավմանը և ՀՈւԱ իրավունքների պաշտպանությունը հայ հասարակությունում:

### Ընդհանուր առաջարկություններ

- Հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր խմբերի համար հասարակական տարածքների հասանելիության ապահովում:
- Պետք է ստեղծվի ՀՈւԱ անհատական օգնականի ինստիտուտ:
- Պետք է մշակվեն համավարակի ժամանակ ՀՈւԱ տարբեր խմբերի պաշտպանության ընթացակարգեր: Պետք է թիրախավորվեն սայլակ օգտագործողները, լսողության, տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք և ՀՈւԱ այլ խմբեր:

### Պատերազմից հետո

- Պետք է վերանայվեն մոբիլիզացիայի կանոնները՝ կապված ՀՈւԱ կամ ՀՈւԵ հայրերի և արական սեռի այլ խնամակալների հետ, որպեսզի նրանք օրինականորեն ազատվեն պարտադիր զինվորական ծառայությունից:
- Պետք է մշակվեն պատերազմի վետերանների, վերապրածների և նրանցից կախվածություն ունեցող անձանց հոգեբանական աջակցության մեխանիզմներ:

### Տեղեկատվության հասանելիություն

- Պետք է ստեղծվի միասնական համապարփակ առցանց թվային հարթակ՝ տարբեր շահագրգիռ կողմերի հետ տվյալների փոխանակման համար: Այն պետք է հասանելի լինի և օգտագործվի ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, նախարարությունների, պետական այլ հաստատությունների կողմից: Հարթակը պետք է ապահովված լինի տեղեկատվության տարածման և իրական ժամանակում թարմացումների գործիքներով և մեխանիզմներով: Հետագայում կարելի է նաև ինտերակտիվ եղանակով կառավարել տարբեր շահագրգիռ կողմերի փաստացի թարմացված տեղեկատվությունը:
- Տվյալների բազային գույքահեռ պետք է կիրառվի մեկ պատուհանի սկզբունքը: Որպեսզի ՔՀԿ ներկայացուցիչները և ՀՈւԱ կարողանան տեղեկատվությունը ստանալ ըստ հաշմանդամության տեսակի և սոցիալական աջակցության, որոնք առկա կլինեն բոլորը մեկ տեղում, որպեսզի դիմողը ստիպված չլինի դիմել տարբեր գործակալություններ:
- ՀՈւԱ և ՔՀԿ հարցերին և դիմումներին արագ պատասխանելու մեխանիզմներ պետք է մշակվեն պետական կառույցների կողմից:
- Պետք է ստեղծվեն ՀՈւԱ կարիքների գնահատման պարբերական մեխանիզմներ:

- Անհրաժեշտ է համապատասխանեցնել հակավիրուսային միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության բովանդակությունը և տարածման խողովակները հաշմանդամություն ունեցող մարդկանց տարբեր կարիքներին (սայլակ օգտագործող մարդիկ, լսողության և տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ, մտավոր խնդիրներ, տարբեր սահմանափակումներ ունեցող երեխաներ և այլն):
- Հիմնվելով միջազգային չափանիշների և մոտեցումների վրա առցանց հարթակները, հավելվածները և պաշտոնական կայքէջերը պետք է հարմարեցվեն տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող ՀՈՒԱ կարիքներին:
- Տարբեր շահագրգիռ կողմերի՝ ՔՀԿ-ների, ՏԻՄ, տեղական և միջազգային կազմակերպությունների, պետական հաստատությունների միջև համագործակցությունը պետք է բարելավվի: ՀՈւԱ հետ աշխատող կազմակերպությունները պետք է համագործակցեն միմյանց հետ և կիսվեն տեղեկատվությամբ: Որպեսզի յուրաքանչյուր կազմակերպություն տեղյակ լինի, թե ինչ են անում ուրիշները: Դա ուղղորդման և ՀՈւԱ աջակցության գործընթացները կդարձնի ավելի հետևողական և արդյունավետ:
- Համավարակի ընթացքում օգտագործվող իրավական բառապաշարը պետք է բացատրվի ՀՈւԱ, որպեսզի նրանք հավասար հասանելիություն ունենան տեղեկատվությանը:

### **Միավորումների ազատություն**

- Միավորումների ազատությունը կարող է ապահովվել, եթե պետությունը՝
  - չի ձեռքարկում քաղաքացիական ակտիվիստներին,
  - բռնություն չի կիրառում քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ,
  - քաղաքացիական գործունեությունը չի դարձնում բեմականացում,
  - արժանապատվորեն արձագանքում է բողոքներին, հատկապես, եթե դրանցում ներգրավված են ՀՈՒԱ:

### **Քաղաքացիական մասնակցություն**

- ԱՀ նիստերը պետք է պարբերաբար անցկացվեն առնվազն եռամսյակը մեկ անգամ:
- Կառավարության պաշտոնյաները պետք է անհապաղ հանդիպումներ կազմակերպեն ՀՈՒԱ հետ աշխատող ՔՀԿ ներկայացուցիչների հետ՝ համավարակի, կարանտինի, պատերազմի և արտակարգ իրավիճակների ժամանակ քաղած դասերը քննարկելու և որոշումներ կայացնելու համար:
- Կառավարությունը պետք է քննարկի ցանկացած արտակարգ իրավիճակ ՔՀԿ հետ, կազմակերպի հանրային խորհրդակցություններ և ներառի ՔՀԿ այդ քննարկումներում: Մասնակցային որոշումների ընդունումը կնպաստի ՀՈւԱ իրավունքների պաշտպանությանը:
- Տեղական ՀԿ-ները պետք է ներգրավվեն կարիքների գնահատման և կարիքների



գնահատման արդյունքների հիման վրա միասնական առցանց ինտերակտիվ տվյալների բազայի ստեղծման գործում:

### **Խտրականության բացառում և ներառում**

- Աղքատ ՀՈւԱ համար պետք է իրազեկման բարձրացման ծրագրեր իրականացվեն:
- Հաշմանդամություն ունեցող կանանց համար պետք է իրազեկման բարձրացման ծրագրեր իրականացվեն:
- Պետք է նախաձեռնել հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ սոցիալական կարծրատիպերը կոտորող իրազեկման արշավ:
- Համալսարանական կրթության մատչելիության ապահովում ՀՈւԱ համար, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար:
- ՀՈւԱ զբաղվածության հնարավորությունները պետք է ընդլայնվեն՝
  - Տարբեր աշխատատեղերը պետք է հարմարեցվեն այնպես, որ ՀՈւԱ աշխատանք ունենան և կարողանան հոգալ իրենց և իրենց ընտանիքների կարիքները:
  - Գործատուներին և աշխատանք փնտրող ՀՈւԱ համար պետք է առցանց հարթակ ստեղծվի, որպեսզի ՀՈւԱ համար աշխատանքի որոնումը դառնա ավելի դյուրին, իսկ գործատուների համար ՀՈւԱ աշխատակից գտնելու հնարավորություններն ընդլայնվեն:
  - Անհրաժեշտ է իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատում, մասնագիտական կողմնորոշում և ուսուցում՝ ՀՈւԱ աշխատանք գտնելու հնարավորություններն ընդլայնելու համար: Կարիքի գնահատումը պետք է կատարվի անհատական մոտեցման սկզբունքից ելնելով:
- Բյուրոկրատական ընթացակարգերը պետք է պարզեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

### **Օրենքի գերակայություն**

- Պետք է սահմանվեն և կատարելագործվեն օրենքների կիրարկման մոնիտորինգի մեխանիզմներն ու գործիքակազմ:
- Ներառական կրթության պրակտիկան պետք է վերահսկվի և կատարելագործվի յուրաքանչյուր դպրոցում՝ հատուկ ուշադրություն դարձնելով այդ դպրոցներ հաճախող ԿԱՊԿՈՒ երեխաներին:
- Հատուկ դպրոցները պետք է պահպանվեն որպես լրացուցիչ ռեսուրս լինի խորը հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթության համար:

### **Պատվիրակված ծառայություններ**

- Պետության կողմից պետք է կիրառվի հավասար վերաբերմունք բոլոր ՀԿ -ների նկատմամբ՝ տենդերների ժամանակ պրոտեկցիոնիզմից և հովանավորչությունից խուսափելու համար:

- ՀՈւԱ համար ծառայությունները պետք է պետության կողմից երկարաժամկետ կտրվածքով պատվիրկվեն որոշակի ՀԿ-ների: Ամեն տարի հայտարարվող մրցույթը չի ապահովում ՀՈւԱ-ների ծառայությունների կայունությունն ու շարունակականությունը: Հաճախ ծառայություն մատուցողի փոփոխությունը արդյունավետ չէ ՀՈւԱ կարիքների բավարարման առումով: ՀԿ-ները մասնագիտանում են ՀՈԻԱ որոշակի խմբի հետ աշխատելու ուղղությամբ: Իսկ եթե մրցույթը հաղթում է այլ ՀԿ, ապա նրանք ստիպված են դադարեցնել գործունեությունը, և անփորձ ՀԿ-ները ստանում են դրամաշնորհներ և սկսում են սովորել դաշտ ներխուժելուց հետո: Մրցութային հիմունքներով և պատվիրակված ծառայությունների մատուցումը պետք է տարբերակվի: Այն ծառայությունները, որոնք պահանջում են ավելի փորձառու ծառայություններ մատուցողներ, պետք է պատվիրակվեն պետության կողմից կոնկրետ ՀԿ-ների:
- Պատվիրակված ծառայությունների շրջանակը պետք է ընդլայնվի Հայաստանի մարզերում, որպեսզի ՀՈԻԱ-ները, ովքեր չեն կարողանում դուրս գալ իրենց համայնքներից, կարողանան ծառայություններ ստանալ իրենց համայնքներում: